

ՀՀ ԳԱԱ  
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ  
ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԶԵԿՈՒՅՑ

ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՆԵՐԻ ԻՆՏԵԳՐՄԱՆ  
ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ (ՍԻՐԻԱՀԱՅԵՐԻ  
ՕՐԻՆԱԿՈՎ)

«Մանուկյան Սիմոն հետազոտական հիմնադրամի»  
դրամաշնորհային ծրագիր

*Լուսինե Տանաջյան, ծրագրի համակարգող, հետազոտող*

*Սոնա Ներսիսյան, հետազոտող*

*Սյուզաննա Բարսեղյան, հետազոտող*

ԵՐԵՎԱՆ 2020

## Երախտագիտության խոսք

Հեղինակներն իրենց երախտագիտությունն են հայտնում *Հայաստանի Ամերիկյան Համալսարանին* և *«Մանուկյան Միմոն» հետազոտական հիմնադրամին* հանրային քաղաքականության ոլորտում հեղինակների համար հետաքրքրություն ներկայացնող թեմայով հետազոտություն իրականացնելու հնարավորություն ընձեռելու համար: Հեղինակները շնորհակալություն են հայտնում նաև *«Մանուկյան Միմոն» հետազոտական հիմնադրամի աշխատանքային թիմին* հետազոտության ընթացքում տարբեր հարցերով աջակցելու համար: Սույն հետազոտությունն իրականացնելու նպատակով հեղինակները հարցազրույցներ են իրականացրել պետական կառույցների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների, փորձագետների և անհատների հետ, որոնց մասնակցությունը շատ կարևոր էր: Հատուկ շնորհակալություն ենք հայտնում հարցազրույցների մասնակիցներին՝ համագործակցության համար: Սույն աշխատանքի բովանդակության ողջ պատասխանատվությունը հեղինակներինն է:

**Հայրենադարձության, ներգաղթի և ինտեգրման քաղաքականության միջազգային փորձը:**

Պետության կողմից լայնածավալ հայրենադարձության կազմակերպումը պահանջում է զգալի միջոցներ: Սակայն ուղղորդված և թիրախային քաղաքականության մշակումը հնարավորություն կտա ոչ միայն խուսափել հսկայական ռեսուրսների ծախսից, այլև, հակառակը, ներառել անհրաժեշտ ներուժ: Այդ նպատակով Հայաստանը կարող է դիտարկել այլ երկրների ներգաղթի, հայրենադարձության, ինչպես նաև սփյուռքի հայրենակիցներին վերադարձնելու կամ նրանց ներուժը ներառելու փորձը, նրանց հետ աշխատանքի մեխանիզմները, քաղաքականությունը:

Հայրենադարձության, ներգաղթի, ինտեգրման վերաբերյալ իրականացվել են շատ քիչ ուսումնասիրություններ, և հետազոտողների մեծ մասը կենտրոնացել է հատուկ օրինակների վրա: Երկրների ընտրության և համեմատության համար ընտրվել են Հայաստանի հետ համադրելի երկրների փորձառությունները. համադրելի՝ նման ցուցանիշներով և տարբեր՝ ընդհանուր առմամբ կամ որոշ ցուցանիշներով, որոնք սակայն կտրուկ տարբերության պայմաններում ցայտուն օրինակներ են առանձնահատուկ իրադարձություններին: Համեմատության ցուցիչներն են՝ միգրացիայի բարձր ցուցանիշը, մեծ և/կամ սփռված սփյուռքի առկայությունը, իրական քաղաքականության արդյունքը, ԽՍՀՄ կազմում լինելը, հարևան երկրներում, նախկին տարածքներում բնակվող մեծ քանակությամբ հայրենակիցները, պարբերաբար տեղի ունեցող ներգաղթի հոսքերը և նրանց ինտեգրման խնդիրները:

Այս աշխատանքում քննարկվում են մի շարք երկրների օրինակներ՝ Իսրայել, Ղազախստան, Հունգարիա, Գերմանիա, Շվեյցարիա, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Նիդերլանդներ, ինչպես նաև հայրենադարձության ընդհանուր մոտեցումները, որոնք կիրառվում են աշխարհի տարբեր երկրներում: Ինչպես նաև դիտարկվում են այս երկրներում օգտագործված ինչպես օրենսդրական, այնպես էլ քաղաքականության պրակտիկան, հայրենադարձությանը վերաբերող նրանց քաղաքականության էվոլյուցիան, ինչպես նաև առանձնահատուկ, իրադարձային խնդիրների լուծման ուղիները:

Հետազոտական դաշտում ընդունված է համեմատել ինտեգրման երկու հիմնական «մոդելներ»՝ «ձուլման» մոդելը և «Բազմամշակութային» մոդելը: Ձուլման մոդելը, որն արևմտյան գրականության մեջ անվանում են նաև որպես «հանրապետական մոդել»: Հիմք ընդունելով իր քաղաքացիների համար հավասար ժամանապատվության սկզբունքը, այն կառուցված է համամարդկային քաղաքականության վրա՝ անկախ տարբերություններից բոլորին միևնույն հավասար իրավունքներ վերագրելով: Բազմամշակութայնության մոդելն, ընդհակառակը, հիմնված է տարբերության քաղաքականության վրա, որն ինքնին ունի ունիվերսալիստական հենք: Բոլոր քաղաքացիները պետք է իրավունք ունենան ապրելու իրենց մշակույթին և իրենց կրոնին համապատասխան: Մեծամասնության կողմից ընդունված համընդհանուր օրենքների ազդեցությունը կարող է խտրական լինել փոքրամասնությանը պատկանող և կրոնական մշակույթին պատկանող մարդկանց համար: Այս երկու քաղաքականությունների նպատակը նույնն է՝ ապահովել բոլոր քաղաքացիների հավասարությունը, բայց դրանք տարբերվում են այն խթանելու ձևով: Առաջին դեպքում հավասարությունը երաշխավորված է խստագույն նույնական վերաբերմունքով՝ անկախ տարբերություններից: Երկրորդ դեպքում հավասարությունը վերաբերում է անհատական հնարավորությունների հավասարությանը:

Ստորև քննարկենք ինտեգրման տարբեր քաղաքականություններ որդեգրած երկրների օրինակներ, դրանց օրենսդրական հիմքը, քաղաքականության կիրառման մեխանիզմները:

#### **Գերմանիա. Բացառումից մինչև ինտեգրման քաղաքականություն:**

Գերմանիան պատկանում է ձուլման ավանդույթ ունեցող երկրների շարքին և երկար ժամանակ համարվում էր «էթնիկ ազգի» բնորոշ օրինակ՝ ի հակադրություն Ֆրանսիայի կողմից մարմնավորված «քաղաքացիական ազգի» մոդելին: Առաջինը հիմնադրվել է արյան իրավունքով (*jus sanguinis*) և վերաբերում է ընդհանուր լեզվական և մշակութային առանձնահատկություններին, իսկ երկրորդը հիմնված է տարածքային սկզբունքի (*jus soli*) և քաղաքական սկզբունքների բաժանման վրա:

Այնուհանդերձ, հսկայական միգրացիոն ակտիվության մարտահրավերների արդյունքում Գերմանիայում ժառանգականության վրա հիմնված քաղաքացիության

փոխանցման ռեժիմը մեղմվել է՝ նոր քաղաքացիների ինտեգրումը հեշտացնելու նպատակով:

1990-ին Գերմանիան վերջապես օտարերկրացիներին տվեց հավասար իրավունքներ և սոցիալական համակարգ մուտք գործելու հնարավորություն, իսկ 2000-ականներին օրենքում մտցվեց քաղաքացիություն ստանալու տարածքային սկզբունքը:

Ներկայումս, նույնիսկ եթե ծնողները Գերմանիայի քաղաքացի չեն, սակայն ութ տարի օրինականորեն ապրում են այդ տարածքում, իրենց երեխաներն ինքնաբերաբար գերմանացի են դառնում: Օտարերկրացին կարող է նաև նատուրալիզացվել՝ հանձնելով լեզվի և նատուրալիզացման քննություն:

Ինտեգրման ներկայիս քաղաքականությանը նպաստել է Անգելա Մերկելը, ով 2005թ. ընդգծեց գերմաներենի և երկրի արժեքների ընդունման կենսական նշանակությունը ներգաղթյալների ինտեգրման համար: Երկիրը հավատարիմ է իր տարածքի բազմազանության պրագմատիկ ճանաչմանը՝ նոր ժամանողներին առաջարկելով լեզվի դասեր և ներգրավելով նրանց համալսարաններում:

**Շվեյցարիա. Արյան իրավունքի վրա հիմնված ազգ և ներգաղթյալների մշակութային ինտեգրում:**

Շվեյցարիայում տարածքային սկզբունքը դեռևս ընդունված չէ: Ներգաղթյալների ինտեգրումը բաղկացած է երեք անբաժանելի տարրերից՝ ինստիտուցիոնալ, մշակութային և իրավական: Ներգաղթյալի մշակութային հարմարումը շատ կարևոր է, ինչպես նշված է «Օտարերկրացիների ինտեգրման 2007 թվականի» որոշման մեջ (հոդված 3): Քաղաքացիություն ստանալու համար դիմումատուն պետք է 12 տարի ապրած լինի Շվեյցարիայում և ապացուցի, որ ինտեգրվել է շվեյցարական մշակույթին: Կեցության 10-20 տարիները կրկնապատկում են հնարավորությունը, ենթադրելով, որ այդ տարիներին կուտակված մշակութային փորձառությունը, ստացած կրթությունը պետք է մեծ դեր ունենա քաղաքացիության ձեռքբերման գործընթացում (Շվեյցարիայի քաղաքացիության ձեռքբերման և կորստի մասին դաշնային օրենք): Բացի բնակության վայրից, նախքան շվեյցարական ազգային պատկանելությունը պետք է կատարվեն չորս պայմաններ՝ ինտեգրվել շվեյցարական համայնքին, հարմարվել շվեյցարական մշակույթին և

ավանդույթներին, համապատասխանել իրավական կարգին և պահպանել շվեյցարական անվտանգությունը: Այս պայմանները Կոնֆեդերացիայի (հմմտ. Հանրապետական մակարդակ) կողմից սահմանված պայմաններն են, բայց Շվեյցարիայում առանձնահատկությունն այն է, որ ազգության ձեռքբերումը կախված է կանտոնի (հմմտ. Նահանգային մակարդակ) որոշմամբ: Այսպիսով, յուրաքանչյուր կանտոն այս նվազագույն պայմաններին ավելացնում է իր ազգային պատկանելիության չափանիշներն ու պայմանները, ինչը Շվեյցարիան դարձնում է քաղաքացիություն ձեռք բերելու առումով առավելագույն սահմանափակումներ ունեցող երկրներից մեկը: Բազմաթիվ կանտոններում բնականացված անձր պարտավոր է երդում տալ: Որպես օրինակ, Ժնևում երդումը հետևյալ ձևն է. «Ես երդվում եմ և խոստանում եմ հավատարիմ լինել հանրապետությանը և Ժնևի կանտոնին, ինչպես նաև Շվեյցարիայի Համադաշնությանը, արդարացնել Ժնևի համայնքի իմ անդամակցությունը իմ գործողություններով և իմ վարքագծով. անել հնարավոր ամեն ինչ՝ այն ազատ և բարեկեցիկ պահելու համար»:

Ռեզիդենտություն ստանալու համար հաշվի է առնվում օտարերկրացու ինտեգրվելու ջանքերը: Նմանապես, երբ տրվում է բնակության թույլտվություն, «իշխանությունները հաշվի են առնում ինտեգրման աստիճանը»: Իշխանությունները կարող են օտարերկրացիների հետ «ինտեգրման պայմանագիր» կնքել, որով բնակության թույլտվություն է տրվում: Այս պայմանագիրը սահմանում է ներգաղթի համար մշակութային ինտեգրման նպատակները:

Այնուամենայնիվ, ի տարբերություն ձուլման մոդելի, Շվեյցարիան ինտեգրման հարցում ավելի առաջադեմ մոտեցում ունի: Համաձայն Շվեյցարիայի քաղաքականության, հաջող ինտեգրումը ոչ միայն ներգաղթյալի վարքի, այլև ընդհանուր պատասխանատվության արդյունք է: Այս փոխադարձությունը պարտավորություններ է ստեղծում, որոնք պետք է հարգեն Կոնֆեդերացիան, կանտոնները և համայնքները օտարերկրացիների նկատմամբ: Նրանք պարտավոր են ստեղծել «պայմաններ, որոնք կնպաստեն հավասար հնարավորություններին», իրֆանեն օտարերկրացիների ներգրավվածությունը հասարակական կյանքում «Շվեյցարիայի և օտարերկրյա բնակչության միջև փոխըմբռնման միջոցով»: 2007թ-ի «Օտարերկրացիների ինտեգրման մասին» որոշումը պնդում է, որ առաջին հերթին

ինտեգրումն ուղղված է շվեյցարացիների և օտարերկրացիների միջև հավասար հնարավորությունների ապահովմանը:

**Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա, Նիդերլանդներ. ինտեգրման քաղաքականություն:**

Ինտեգրման և քաղաքացիության ազգային մոդելը սովորաբար սահմանվում է որպես հանրային փիլիսոփայություն (Shain, 2009), քաղաքականության պարադիգմ (Favell, 1998; Guiraudon, 2006), ինստիտուցիոնալ և դիսկուրսիվ հնարավորությունների կառույց (Koopmans, Statham, Guigni, & Passy, 2005) կամ ազգային մշակութային իդիոմ (Brubaker, 1992): Այս բոլոր հասկացությունները փորձում են ցույց տալ, թե ինչպես է սոցիալական իրականությունը կառուցված ազգի ինքնագիտակցության վերաբերյալ գոյություն ունեցող գաղափարներով (Goffman, 1974; Hall, 1993; Müller, 2005; Sabatier & Jenkins-Smith, 1993; Skocpol, 1985): Այս տեսանկյունից Ֆրանսիան դիրքորոշում է իրեն որպես ձուլման երկիր (ի տարբերություն բազմամշակութային երկրների, ինչպիսիք են՝ Մեծ Բրիտանիան կամ Նիդերլանդները), որոնց ազգային ինքնությունը հիմնված է համընդհանուր հասարակական փիլիսոփայության վրա (ի տարբերություն՝ էթնոկրթական ազգային ինքնության, ինչպես տեղի է ունենում Գերմանիայում): Ֆրանսիան, լինելով հանրապետական երկիր, հանրապետության մասին պատկերացումը ձևավորում է բոլորին ներառող սկզբունքով՝ որպես մեկ ընդհանուր քաղաքացիության կերպար: Ի հակադրություն վերջինի, Մեծ Բրիտանիայում և Նիդերլանդներում տարբերությունները դիտարկվում են որպես զարգացման հնարավորություն՝ էթնիկ կամ ռասայական ինքնությունների հիման վրա: Այստեղ ինտեգրման քաղաքականությունը նպատակ ունի խթանել խմբային ինքնությունը՝ ընդհանուր անդեմ քաղաքացիության փոխարեն (Joppke, 2009; Koopmans et int., 2005; Koopmans & Statham, 2005; Sniderman & Hagendoorn, 2007):

Ինտեգրման մոդելների այս տեսակետն առաջին հերթին շեշտում է կոլեկտիվ շահերը՝ հիմնված ինստիտուցիոնալ պայմանավորվածությունների (օրինակ՝ կրթության կամ առողջության ոլորտում) և հանրային համաձայնության վրա (Bleich, 2003; Brubaker, 1992, էջ 13-16):

Ավանդաբար «բազմամշակութային» քաղաքականություն սահմանող երկրները, ինչպիսին են Մեծ Բրիտանիան կամ Նիդերլանդները, ընդգծում են

ընդհանուր լեզվի և արժեքներ փոխանակելու կարևորությունը: Որոշ երկրներ, ինչպիսիք են Կանադան և Մեծ Բրիտանիան, ավելի հանդուրժող են մշակութային և կրոնական տարբերությունների դրսևորման համար, քան մյուսները: Օրինակ՝ բրիտանական դպրոցներում ուսուցիչները բարձրացնում են աշակերտների տեղեկացվածությունը այլ մշակույթների և կրոնների գոյության մասին:

Այսպիսով, ինտեգրման վերաբերյալ նորմատիվ «ինստիտուտները», «պարադիգմները» դիտվում են որպես ինքնության, քաղաքացիության, ներգաղթի, բազմազանության և այլնի հետ կապված քաղաքականության և պրակտիկայի առաջնային և հիմնական շարժիչ ուժեր: Սակայն վերոնշյալ եվրոպական երկրների ինտեգրման ռազմավարությունների կիրառման փորձը ցույց է տվել, որ ինտեգրվելու հրահանգը բավարար չէ հավասար հնարավորություններ ստեղծելու և բացառապես արդյունավետ կերպով ներագդելու համար:

Վերոնշյալ օրինակները վերաբերում են ներգաղթյալների հանդեպ քաղաքականությանը և նրանց ինտեգրման մեխանիզմներին: Սակայն Հայաստանի դեպքում հարցն ունի այլ կողմեր ևս: Այստեղ կարևոր առանձնահատկությունը մեր երկրի միգրացիոն քաղաքականության նպատակն է, որն ուղղված է առավելապես ներգաղթ հարուցելուն: Անշուշտ այստեղ հատուկ դեր ունի հսկայական հայկական սփյուռքի առկայության փաստը: Հայրենադարձությունը հանդիսանում է դեպի Հայաստան ներգաղթի հիմնական ուղին, որն իր հերթին ներառում է ոչ միայն «դասական սփյուռքին», այլև Հայաստանից արտագաղթած հայերին: Միգրացիոն քաղաքականության այս ուղղությունն արևմտյան գրականության մեջ անվանում են վերադարձի միգրացիա և առանձնացնում հայրենադարձությունից:

Վերադարձի միգրացիայի քաղաքականության ուսումնասիրությունները ենթադրում են, որ «վերադարձը» պետք է դիտարկել որպես միգրացիոն շրջափուլի մի մաս, քանի որ վերադարձի պատրաստակամությունը վերաբերում է առաջին հերթին արտագաղթի պատճառներին և հյուրընկալող երկրում միգրանտի հետագա փորձառությանը: Կասարինոն (Cassarino 2008) առաջարկում է վերադարձի միգրացիան վերլուծելու և ծագման երկիր վերաինտեգրվելու եռաստիճան մոտեցում: Առաջին փուլը ներառում է մինչնեգաղթի պայմանները, երկրորդ փուլը նայում է



միգրացիայի փորձին, իսկ երրորդը վերլուծում է միգրանտների հետ վերադարձի պայմանները:

Այսպիսով, քննարկենք նաև սփյուռքի առկայության ցուցանիշներով Հայաստանի հետ համեմատելի երկրների օրինակներ:

### **Իսրայել. Մեծ սփյուռք, քաղաքականության իրական արդյունք:**

Հայրենադարձության իրավունքը արձանագրված է Իսրայել պետության Անկախության հռչակագրում, որն ընդունվել է 1948թ.: Այնտեղ ասվում է, որ հրեա ժողովուրդը «բնական իրավունք ունի իրենց ինքնիշխան պետության մեջ լինելու սեփական ճակատագրի տերը»: Հռչակագրում<sup>1</sup> նշվում է, որ Իսրայել պետությունը բաց կլինի հրեական ներգաղթի և փախստականների ընդունման համար:

Իսրայելի ժամանակակից պետությունն իրեն համարում է պատասխանատու աշխարհում բոլոր հրեաների ճակատագրի համար և, առաջին հերթին, ալիա (հայրենադարձություն Իսրայել) իրականացնելու իրենց ունակության համար: Այս իրավունքի օրինական ձևն է Վերադարձի օրենքը, որն ընդունվել է Կնեսետի կողմից 1950 թվականի հուլիսի 5-ին<sup>2</sup>: Համաձայն 1952թ. քաղաքացիության մասին օրենքի, վերադարձի օրենքը իրավաբանական հիմք է՝ ցանկացած հրեայի մեխանիկորեն իսրայելական քաղաքացիություն տալու համար:

Իսրայելական «Վերադարձի օրենքը»<sup>3</sup> եզակի է նրանով, որ ցանկացած հրեա համարվում է քաղաքացի Իսրայել ժամանելու պահից՝ առանց որակավորման ժամանակաշրջանի: Սա նշանակում է, որ Իսրայելի քաղաքացիություն ստանալու համար անձի ցանկությունը բավարար հիմք է, կարիք չկա բյուրոկրատական ճանապարհ անցնել: Սա պետության բարձր շահագրգռության դրսևորումն է օրենսդրական մակարդակով:

Ընդհանրապես, հայրենադարձության իրավունք ունեցող անձի բնորոշումը սովորաբար կապված է էթնիկ էության հասկացության հետ, ինչը դժվար է սահմանել

---

<sup>1</sup> Текст Декларации о независимости Израиля доступен на сайте Министерства иностранных дел Израиля на английском языке.

<http://www.mfa.gov.il/mfa/foreignpolicy/peace/guide/pages/declaration%20of%20establishment%20of%20state%20of%20israel.aspx>

<sup>2</sup> Текст Закона о возвращении см. на сайте Кнессета. <http://www.knesset.gov.il/laws/special/eng/return.htm>

<sup>3</sup> Վերադարձի օրենքը բացառություններ ունի հանցագործների, ինչպես նաև հրեա ժողովրդի դեմ գործողություններով զբաղվող անձանց համար: Այսպիսով, Իսրայելը փորձում է հայրենադարձության ծրագիրը չդարձնել արդարադատությունից խուսափելու հնարավորություն:

օրենքով: Այս հարցը բազմիցս քննարկումների տեղիք է տվել Իսրայելում: Շատերը պնդում էին, որ անհրաժեշտ է Հրեայի գալախական<sup>4</sup> (հրեա մայր կամ որդեգրված հուդայականություն) մեկնաբանությունը հիմք դարձնել, բայց այդ մոտեցումը չընդունվեց: Մեկ այլ մոտեցումամբ «այն մարդը, ով ամբողջ սրտով հայտարարում է իր հրեականության մասին, պետք է գրանցվի որպես հրեա՝ առանց նրանից այլ ապացույցներ պահանջելու»: Այս մոտեցումը նույնպես մերժվեց: Արդյունքում ընդունվեց փոխզիջումային տարբերակ, որը, ըստ էության, ներառում է հրեական գալախական բնորոշում՝ առանց ինքնին գալախի: Ժամանակակից պայմաններում հայրենադարձվելու իրավունքը տրվում է նաև հրեաների թոռներին, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամներին:

Իսրայելում գտնվելուց երեք ամիս անց ցանկացած հրեա կարող է դիմել ժամանակավոր անձնագիր ստանալու համար, որով կարող է մեկնել Իսրայելից: Այս անձնագիրն ուժի մեջ է մեկ տարի ժամկետով և ունի նորացման իրավունք: Իսրայելի քաղաքացու միջազգային անձնագիր կարելի է ստանալ հայրենադարձությունից մեկ տարի անց (365 օր ապրում էր Իսրայելում)<sup>5</sup>:

Իսրայելը ճանաչում է հայրենադարձի մի քանի կարգավիճակ՝

- Հայրենադարձ
- Անչափահաս հայրենադարձ
- Իսրայելցի-հայրենադարձ (արտասահմանում՝ Իսրայելի քաղաքացիների ընտանիքում ծնված անձ)
- Հայրենադարձի որդի/դուստր
- Վերադարձած անչափահաս
- Հայրենադարձի ընտանիք
- Վերադարձած իսրայելցի (2-ից ավելի տարի արտասահմանում ապրած, աշխատած անձ)

Հայրենադարձության հարցերով Իսրայելում զբաղվում են երեք ինստիտուտ՝ ակիայի և արտոբացիայի նախարարությունը, Նատիվը և Սոխնուտը:

<sup>4</sup> Галаха – традиционное еврейское право

<sup>5</sup> Подробнее см. на сайте «Твой путь в Израиль». <http://way2israel.ru/sbezhavshie-repatrianty-i-mozhno-li-vernutsya-obratno-posle-repatriatsii-mozhno-li-vyiezhat-iz-izrailya-posle-alii-posledstviya-i-nakazaniya/>

Ալիայի և աբսորբացիայի նախարարությունը զբաղվում է այն հայրենադարձների հարցերով, ովքեր արդեն ժամանել են Իսրայել, մինչդեռ Նատիվը սովորաբար կազմակերպում է տեղափոխում, իսկ Սոխնուտը համակարգում է համայնքների գործունեությունը և նրանց կապը հայրենիքի հետ: Նախարարությունն ունի տեղական մասնաճյուղերը, ինչպես նաև ենթակա հատուկ գերատեսչություններ, այդ թվում՝ բնակարանային և զբաղվածության, սոցիալական աբսորբացիայի, ուսանողների գործերի բաժին և գիտնականների աբսորբացիայի կենտրոններ: Տեղեկատվության դեպարտամենտը պատասխանատու է հայրենադարձների մշակութային հարմարման, ինչպես նաև հայրենադարձության ընթացքում ծագած խնդիրների վերաբերյալ տեղեկատվություն տրամադրմամբ և ուղղորդմամբ:

Աբսորբացիայի քաղաքականությունը ձևավորվում է նախարարության կողմից, իսկ դրա մշակումն իրականացնում է պլանավորման և հետազոտությունների բաժինը: Այդ քաղաքականության իրագործումը կատարվում է պետական և ոչ պետական ինստիտուտների հավասար մասնակցությամբ:

**Հունգարիա. Հարևան երկրներում, երկրի նախկին տարածքներում բնակվող մեծ քանակությամբ հայրենակիցներ:**

Արտասահմանում բնակվող հունգարացիների վերաբերյալ առաջին իրավական ակտն ընդունվել է 2001 թվականին: Ըստ որի, արտասահմանցի հունգարացիները կարող էին ստանալ «Հունգարիայի քաղաքացիության վկայագիր»:

Հայրենակիցների նկատմամբ վերաբերմունքի կարգը արձանագրված է Հունգարիայի Սահմանադրության մեջ (2011թ. հրատարակություն): 14-րդ հոդվածում ասվում է, որ Հունգարիայի ոչ մի քաղաքացի չի կարող վտարվել Հունգարիայի տարածքից, և Հունգարիայի ցանկացած քաղաքացի կարող է ցանկացած պահի վերադառնալ արտերկրից: Սահմանադրության Դ հոդվածը ենթադրում է մեկ ընդհանուր հունգար ազգի գոյություն: Այս հոդվածով սահմանվում է նաև Հունգարիայի պատասխանատվությունը նրա սահմաններից դուրս ապրող հունգարացիների ճակատագրի համար. «Հունգարիան պետք է աջակցի հունգարական համայնքների գոյատևմանն ու զարգացմանը, նրանց ինքնության պահպանմանն ուղղված ջանքերին, տեղական ինքնակառավարման իրավունքը և հայրենի հողերում բարգավաճումը, ինչպես նաև Հունգարիայի հետ նրանց

համագործակցությունը»<sup>6</sup> : Այնուամենայնիվ, Սահմանադրությունը չի նշում օտարերկրացի հունգարացիների Հունգարիա գալու կամ նման անհրաժեշտության իրավունքը:

Ներկայումս Հունգարիայում չկա ներգաղթյալների ինտեգրման վերաբերյալ առանձին օրենք: Ներգաղթյալների ինտեգրման հարցերը մասնակիորեն քննարկվում են «Փախստականների մասին» օրենքում, որով նախատեսվում է ինտեգրման ծրագրերի ներդրում փախստականի կարգավիճակ ստացած անձանց համար<sup>7</sup>:

Արտասահմանցի հունգարացիների հարցը լուծում է Հունգարիայի արտաքին համայնքների պետական քարտուղարությունը՝ Հունգարիայի Վարչապետի գրասենյակում: Պետության մասնակցությամբ ստեղծվել է նաև Հունգարիայի արտաքին համայնքների հետազոտական ինստիտուտ: Քարտուղարությունը և ինստիտուտը համատեղ վերահսկում են հունգարական սփյուռքի՝ բնակության երկրներում տիրող իրավիճակը և հրատարակում են հունգարական սփյուռքի իրավիճակի վերաբերյալ ամենշաբաթյա տեղեկագիր: Քարտուղարությունը կապի մեջ է սփյուռքի հետ և նախատեսում է սփյուռքի համար պետական քաղաքականություն:

2011-ին ստեղծվեց Հունգարիայի սփյուռքի խորհուրդը՝ սփյուռքի մոտավորապես 50 կազմակերպությունների մասնակցությամբ: 2011թ. նոյեմբերին տեղի է ունեցել Խորհրդի առաջին նիստը: հետագայում այդ հանդիպումները դարձան տարեկան, և մասնակիցների թիվը տարեցտարի ավելանում է:

Քաղաքացիության մասին օրենքում փոփոխություններ են կատարվել, որոնք կարգավորում են վերադարձողների օրինական կարգավիճակը և էթնիկ հունգարացիների համար երկքաղաքացիության իրավունքը, որն ընդունվել է 2010 թվականին: Հունգարացի փոքրամասնության խնդիրը մնում է բավականին զգայուն Հունգարիայի հարևան երկրներում՝ Սլովակիա, Ուկրաինա, Սերբիա և Ռումինիա: Հունգարիայի կառավարությունը իր սահմանների հարևանությամբ ապրող հունգարացիներին համարում է ռեսուրս տարածքային խնդրի վերաբերյալ, ինչն

<sup>6</sup> Текст Конституции Венгрии доступен по адресу [https://www.constituteproject.org/constitution/Hungary\\_2011.pdf](https://www.constituteproject.org/constitution/Hungary_2011.pdf)

<sup>7</sup> Закон No CXXXIX от 1997 о Беженцах

ապացուցում է այն փաստը, որ նրանք ապրում են այն տարածքում, որը Առաջին աշխարհամարտից առաջ Հունգարիայի մաս էր կազմում:

2011 թվականի սկզբից Հունգարիան սկսեց քաղաքացիություն տրամադրել էթնիկ հունգարացիներին, որոնք կորցրեցին այն Առաջին և Երկրորդ համաշխարհային պատերազմների արդյունքում: Այնուամենայնիվ, ծրագիրը չի սահմանափակում քաղաքացիությունը բացառապես էթնիկ հունգարացիների կողմից: Այսպես, հայտատուն պետք է ծնված լինի կամ հանդիսանա նրանց սերունդ, որը ծնվել է Հարավային Սլովակիայում, Տրանսիլվանիայում, Վոյվոդինայում կամ Ուկրաինայի Տրանսկարպատյան շրջանում մինչև 1920 թվականը կամ 1938-1945 թվականների միջև: Այսպիսով, ուկրաինացիները կարող են նաև Հունգարիայի քաղաքացիություն ստանալ, չնայած, որպես կանոն, պահանջվում հունգարերենով հարցազրույց:

Հունգարիան շնորհում է երկքաղաքացիություն և չի պահանջում հրաժարվել իր նախկին քաղաքացիությունից կամ նույնիսկ տեղափոխվել Հունգարիայում մշտական բնակության: Երեխաները և հարազատները, ովքեր ստացել են Հունգարիայի քաղաքացիություն, նույնպես կարող են այն ձեռք բերել պարզեցված մեխանիզմով: Նման առաջարկն, իհարկե, առավել զրավիչ է թվում Ուկրաինայի Տրանսկարպատյան շրջանի բնակիչների համար, ովքեր ԵՄ քաղաքացիություն են ստանում Հունգարիայի քաղաքացիություն ստանալու հետ միասին, և, համապատասխանաբար, Հունգարիայում և ԵՄ այլ երկրներում աշխատելու իրավունք: Միննույն ժամանակ, նոր քաղաքացին ստանում է Հունգարիայի կենսաթոշակ կամ սոցիալական օգնություն ստանալու իրավունք:

Մեծապես պարզեցվել է դիմում և քաղաքացիություն ստանալու կարգը: Դիմումի քննարկումը տևում է մինչև վեց ամիս, որից հետո հայտատուն կարող է ձեռք բերել քաղաքացիություն: Բացի քաղաքացիությունից, հայրենադարձության ծրագրի դիմորդները կարող են ձեռք բերել անձնագիր, կացության քարտ և ծննդյան վկայական: 2012 թվականի նոյեմբերից Հունգարիայի նոր քաղաքացիներ ստացել են ընտրության իրավունք ազգային ընտրություններում: 2013-ին հայրենադարձության

քաղաքականությունը ձևակերպվել է որպես հայեցակարգային շրջանակային քաղաքականության փաստաթուղթ<sup>8</sup>:

**Ղազախստան. Հայրենադարձություն հետխորհրդային երկրներից:**

Անկախություն ձեռք բերելուց ի վեր Ղազախստանն ակտիվորեն վարում է ԽՍՀՄ երկրներից դազախների հայրենադարձման քաղաքականություն: Հայրենադարձները կոչվում են «օրավաններ», ում տրամադրվում են մի շարք արտոնություններ և աջակցության ծրագրեր սոցիալական, տնտեսական և այլ ոլորտներում: Այս ծրագրերը ներառում են աշխատանքի տեղավորման աջակցություն, շարունակական կրթություն կամ վերապատրաստում, դազախներն սովորելու, բուհերում, արհեստագործական դպրոցներում և մանկապարտեզներում տեղեր տրամադրելու գործում: Օրավանները չեն վճարում հյուպատոսական վճարներ՝ մուտքի արտոնագրի, Ղազախստան մուտք գործելու համար և հնարավորություն ունեն վերականգնել քաղաքացիությունը՝ պարզեցված ընթացակարգի համաձայն: Օրավանները ստանում են նաև այն բոլոր տեսակի սոցիալական աջակցությունը, որը տրամադրվում է Ղազախստանի քաղաքացիներին: Նրանց հասանելի է արտոնյալ հիմունքներով բնակարան ձեռք բերելու արտոնություն, ինչպես նաև վճարվում է միանվագ նպաստ՝ երկիր ժամանելուն պես: Երկրում գոյություն ունի հայրենադարձների ժամանակավոր տեղավորման 14 կենտրոն, որոնցում նրանք կարող են մնալ մինչև բնակարանային, բյուրոկրատական և սոցիալական հարցերը լուծվեն: Բացի այդ, հայրենադարձները ազատվում են Ղազախստանի զինված ուժերում ծառայությունից:

Այսպիսով, ներգաղթի, հայրենադարձության, հայրենադարձների ինտեգրման վերը քննարկված միջազգային փորձը թույլ է տալիս առանձնացնել Հայաստանի համար կիրառելի ուղղությունները և վերանայել ՀՀ-ի ունեցած փորձառությունը: Այդ նպատակով հաջորդիվ քննարկենք Հայաստանում միգրացիոն, սփյուռքի և հայրենադարձության քաղաքականությունների ներկա վիճակը, դրանց սկզբունքները, էվոլուցիան և գործառնության մեխանիզմները:

**Միգրացիոն քաղաքականությունը ՀՀ-ում:**

<sup>8</sup> Сам документ доступен по адресу: [https://www.nemzetiregiszter.hu/download/b/12/10000/policy\\_2013.pdf](https://www.nemzetiregiszter.hu/download/b/12/10000/policy_2013.pdf)

ՀՀ միգրացիոն քաղաքականությունը սահմանող փաստաթղթերը և օրենսդրական կարգավորումները հստակորեն չեն սահմանում սփյուռքի դերը և չեն տարանջատում հայրենադարձությունը ներգաղթի քաղաքականության մեջ: Այսպես, «Հայաստանի Հանրապետության միգրացիայի քաղաքականության 2017-2021 թվականների ռազմավարությունը» փաստաթղթում սփյուռք եզրը կիրառվում է երեք անգամ. երկու անգամ՝ որպես արտագնա աշխատանքի մեկնող քաղաքացիների իրավունքների և շահերի պաշտպանության համար սփյուռքյան կազմակերպությունների հետ համագործակցություն, և մեկ անգամ՝ ներածության մեջ շեշտելով սփյուռքի կարողությունների արդյունավետ օգտագործման կարևորությունը: Այնուհետև մշակված ինտեգրման և վերաինտեգրման ոլորտների կառավարումը ներկայացնող «Հայաստանի Հանրապետության միգրացիայի քաղաքականության՝ ինտեգրման և վերաինտեգրման խնդիրների կարգավորման 2021-2031 թվականների ռազմավարությունը» ընդհանրապես չի անդրադառնում սփյուռքին կամ օգտագործում հայրենադարձություն եզրը: Փաստորեն մինչև 2031 թվականը Սփյուռքի գործերի հանձնակատարի գրասենյակի կողմից հայրենադարձության քաղաքականության մշակումը և ԱԺ կողմից «Հայրենադարձության մասին» օրենքի մշակումը հայտնվելու է հակասությունների մեջ՝ վերոնշյալ ռազմավարության և դրանից բխող ծրագրերի հետ: Ռազմավարությունն ինտեգրման և վերաինտեգրման համար սահմանում է վեց թիրախ խմբերի կարիքները՝ օտարերկրացիներ, վերադարձողներ, ներքին տեղահանված անձինք, ապաստան հայցողներ, փախստականներ, հարկադիր տեղահանվածների իրավիճակում գտնվող անձինք: Հայրենադարձի իրավական կարգավիճակը արտացոլված չէ այս քաղաքականության մեջ: Իսկ հայրենադարձության առանձին քաղաքականություն ՀՀ կառավարությունը դեռևս չի մշակել:

Կառավարությունը պետք է հստակություն մտցնի այս հարցում. կա՛մ պետք է համակարգված աշխատանք պատասխանատու գերատեսչությունների միջև՝ ունենալով միասնական քաղաքականություն, կա՛մ պետք է տարանջատել միգրացիոն և սփյուռքի/հայրենադարձության քաղաքականությունները՝ չթողնելով

հակասական, վիճելի կամ փոխադարձ պատասխանատվության դաշտ տեղափոխող հարցեր:

Կարևոր է, որ ինտեգրման քաղաքականության մեջ միգրանտների վերոնշյալ վեց կատեգորիաների համար հատկացվող ծրագրերն ու փաթեթները, հակասության մեջ հայտնվելով հայրենադարձի իրավական կարգավիճակի համար սահմանվող ինտեգրման ծրագրի հետ, չխաթարեն հասարակության սոցիալական համերաշխության, հավասարության և արդարության կարևոր սկզբունքները:

Հաշվի առնելով, որ հայրենադարձության քաղաքականությունը և իրավական կարգավորումները մշակման, իսկ ինտեգրման ռազմավարության նախագիծը հաստատման փուլում են, շատ հրատապ է ապագայում այս հակասությունները հարուցող հարցադրումների լուծումը հենց այս փուլում:

Մեծ կարևորություն տալով Հայաստանի զարգացման համար սփյուռքի ներառմանը և ժողովրդագրական իրավիճակի բարելավման գործում ներգաղթի հատուկ քաղաքականությանը, միգրացիոն քաղաքականության և ինտեգրման ռազմավարության մեջ էական նշանակություն ունի սփյուռքի գործոնի լայն ներառումը և ժողովրդագրական կարիքներին ուղղված ինտեգրման ծրագրերի ներառումը:

#### **Սփյուռքի քաղաքականությունը ՀՀ-ում:**

Սփյուռքի քաղաքականության շրջանակները սահմանող առկա փաստաթղթերն են՝ **Կառավարության ծրագրերը** (ընդունված 2018 և 2019 թվականներին)<sup>9</sup>, 2018թ. դեկտեմբրի 9-ի արտահերթ խորհրդարանական ընտրություններին **«Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագիրը**<sup>10</sup>, **«Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին»** Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը<sup>11</sup>:

<sup>9</sup> Կառավարության ծրագիր 2018, <http://www.gov.am/files/docs/2782.pdf>

Կառավարության ծրագիր 2019, <http://www.gov.am/files/docs/3133.pdf>

<sup>10</sup> <https://civilcontract.am/imqayl>

<sup>11</sup> [https://www.e-](https://www.e-draft.am/projects/1503/about?fbclid=IwAR2JIV7IR776A4SFfn9ADXaGAt5ajOBLGqG0iwqV8eGukAHETQvsaM)

[draft.am/projects/1503/about?fbclid=IwAR2JIV7IR776A4SFfn9ADXaGAt5ajOBLGqG0iwqV8eGukAHETQvsaM](https://www.e-draft.am/projects/1503/about?fbclid=IwAR2JIV7IR776A4SFfn9ADXaGAt5ajOBLGqG0iwqV8eGukAHETQvsaM)



Նոր կառավարության 1-ին ծրագրում (1 հունիսի, 2018թ.) «**Հայաստան-սփյուռք կապեր**» բաժինը հպանցիկ անդրադառնում է սփյուռքի հետ հարաբերություններին: Որպես առաջնահերթություններ նշվում են (խմբ.)՝ ա) հայության մարդկային, ֆինանսական, տնտեսական, մտավոր ներուժի կենտրոնացում Հայաստանում, բ) սփյուռքի ներուժը ՀՀ կառավարման համակարգում ներգրավելու արգելքների վերացում, գ) հայկական համայնքներում հայապահպանության գործում սփյուռքի ջանքերի և դերի կարևորում, դ) մեծ հայրենադարձության հարուցում: Այստեղ կառավարության դերը միայն երևում է սփյուռքի ներուժը այդ համակարգում ներգրավելու օրենսդրական կարգավորման մեջ: Մյուս կետերը բավականին վերացական են կամ առանց կառավարության հանձնառության: Ամենավիճելին հայրենադարձության հարցն է՝ առանց համապատասխան ռազմավարության կամ ծրագրի:

Հաջորդ պաշտոնական փաստաթուղթը «Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագիրն է, որտեղ սփյուռքին վերաբերող հատվածը ներկայացված է բավականին մանրամասն և մշակված՝ ի համեմատություն կառավարության ծրագրերի: Ինչպես նաև, այլ բաժինների մեջ նույնպես անդրադարձ կա սփյուռքին: Ծրագրում «**Ուժեղ Հայաստան, ուժեղ սփյուռք**» վերտառությամբ բաժնում կան հայրենիք-սփյուռք կապի ամրապնդման և հայրենիքի զարգացման կարևոր, մինչև այդ որևէ տեղ չարտացոլված շեշտադրումներ և քաղաքականության ուղղություններ (խմբ.), ինչպիսիք են՝ ա) սփյուռքի ներուժի բացահայտմանն ուղղված հետազոտությունները, ներուժի քարտեզագրում ու ներգրավում, բ) սփյուռքահայերի՝ ՀՀ-ում ներկայացվածության ինստիտուցիոնալացում և կառավարման համակարգում ներգրավելու արգելքների վերացում, գ) սփյուռքի ուժեղացմանն ուղղված ծրագրերի իրականացում, դ) Հայաստանի անվտանգության ու զարգացման նպատակների համար սփյուռքի ներուժի հավաքագրում, ե) հայրենադարձության կազմակերպման ծրագրերի մշակում:

ՀՀ կառավարության հաջորդ ծրագրում (8 փետրվարի, 2019թ.) «**Սփյուռքի հետ կապերը**» անվանմամբ ենթաբաժնում սահմանվում է չորս ուղղություն (խմբ.)՝ 1) գիտական, մասնագիտական, կրթամշակութային, տնտեսական և այլ ոլորտներում համահայկական ցանցերի ստեղծում և զարգացում, 2) Հայաստանի զարգացման մեջ

սփյուռքի ներուժի ներգրավում և հանրային կյանքում մասնակցություն, Հայաստան-ընդունող երկիր հարաբերություններում սփյուռքի դերի մեծացում, 3) հայրենադարձության խթանում և ՀՀ-ում սփյուռքահայերի ինտեգրման աջակցություն, 4) սփյուռքյան կառույցների ամրապնդման և համահայկական խնդիրների լուծման գործում նրանց դերի կարևորում, սփյուռքի ներկայացուցչական կազմակերպություն ստեղծելու ուղղությամբ ջանքերի գործադրում: Ծրագրի յոթ տարբեր մասերում ուղղակի կամ անուղղակի անդրադարձ կա սփյուռքին:

Կառավարության այս ծրագիրը կարելի է որակել որպես հետընթաց սփյուռքի հռչակված քաղաքականությունից և քննադատելի է ինքնին որպես ծրագիր մի շարք առումներով: Ծրագրում չափազանց նեղացվել է հայրենիք-սփյուռք ինստիտուցիոնալ հարաբերություններում ՀՀ-ի՝ որպես ազգային պետության դերը և գործառույթները, ներկայացնելով այն որպես կարևորողի, գնահատողի, նպաստողի, ջանքեր գործադրողի, բայց ոչ մշակողի և իրականացնողի կարգավիճակում: Անգամ ենթաբաժնի անվանման մեջ չկա հարաբերության Հայաստան կամ հայրենիք կողմը: Ըստ այդ ծրագրի սփյուռքի հետ միայն կապի մասին է խոսքը:

Արդեն խորհրդարանական ընտրություններից հետո **Սփյուռքի նախարարությունը** միացվում է վարչապետի աշխատակազմին՝ այնտեղ ստեղծելով **Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակ**: Հանձնակատարի լիազորություններն են (խմբ.)՝ 1) համակարգել համահայկական ցանցերի ստեղծման և զարգացման քաղաքականությունը, 2) Հայաստան-սփյուռք գործակցության համար առաջարկություններ ներկայացնել Վարչապետին հետևյալ ուղղություններով. ա) հայրենադարձության և Հայաստանում սփյուռքահայերի ինտեգրման, բ) համահայկական կառույցների ամրապնդման և համահայկական խնդիրների լուծման գործում նրանց դերակատարության բարձրացման, գ) սփյուռքի ներուժի թիրախային օգտագործման և լիարժեք նպատակային ներգրավման, դ) ինքնության պահպանման աջակցության վերաբերյալ, 3) համակարգել սփյուռքի բազմազան համայնքների կարիքների բավարարմանն ուղղված քաղաքականության իրականացման ծրագրերը, 4) իրականացնել Հայաստանի հանրային կյանքի կազմակերպման գործում սփյուռքի մասնակցության ապահովմանն ուղղված պետական և այլ ծրագրերի մշտադիտարկումը:

Նույն օրենքով Վարչապետը կարգավորում է սփյուռքի հետ կապված քաղաքականությունը: Մակայն որևէ տեղ չի նշվում հանձնակատարի գրասենյակի՝ սփյուռքի քաղաքականության մշակման և իրագործման գործառույթը: Կարելի է ենթադրել, որ Վարչապետն անձամբ, ըստ հայեցողության կհանձնարարի սփյուռքի հետ հարաբերությունների առաջնահերթությունները, այդպիսով՝ ինստիտուցիոնալ մոտեցումները փոխարինելով անձի/կառույցի որոշումներով:

**Հայրենադարձության քաղաքականությունը ՀՀ-ում:**

Ազգային պետությունները, մի կողմից, ներագրում են անդրազգային միգրացիոն հոսքերի վրա՝ սահմանափակելով կամ ուղղորդելով դրանք, մյուս կողմից, իրենց վրա են կրում միգրացիայի հետևանքները: Միգրացիոն քաղաքականությամբ, իրավական կարգավորումներով, քաղաքացիության մասին օրենքների միջոցով ազգային պետությունները ներառում կամ բացառում են խմբերին կամ անհատներին պետության կազմի մեջ՝ փոխակերպելով ազգի և ազգային ինքնության սահմանումները: Միգրացիոն հոսքերի այդ կարգավորումներում հատուկ տեղ ունի հայրենադարձությունը, որը պետության կողմից խրախուսվող և աջակցվող ներգաղթի ձևերից է: Հայրենադարձությունը կարելի է սահմանել որպես «ծագման վայր» վերադառնալու գործընթաց: Միջազգային իրավունքում հայրենադարձության քաղաքականությունը դիտարկվում է որպես մարդու հիմնարար իրավունքի՝ «վերադարձի իրավունքի» իրացում, տեղափոխվել այն երկրի տարածք, որը համարում է իր հայրենիքը: Այսօր աշխարհի մի քանի տասնյակ երկրներ իրականացնում են հայրենադարձության քաղաքականություն կամ ունեն այդ գործընթացի օրենսդրական կարգավորումներ: Հայրենադարձության ծրագրերը հաճախ իրականացվում են «տիտղոսակիր ազգի» նկատմամբ և խրախուսում են արտագաղթածների վերադարձը ծագման երկիր:

Հայրենադարձությունը կարևորվում է հատկապես սփյուռք ունեցող զարգացող երկրի տեսանկյունից: Այսպես, Հայաստանի զարգացման համար էական է սփյուռքի մարդկային, սոցիալական և ֆինանսական կապիտալի ներառումը: Եթե այլ երկրների պարագայում հայրենադարձության հիմնական նպատակներից է պետության էթնիկ և/կամ կրոնական կազմում տիտղոսակիր ազգի ներկայացվածության գերակշռումը, քաղաքական նշանակությունը, ապա Հայաստանի համար հայրենադարձության

խնդիրը կարող ենք կարևոր համարել հիմնականում ազգային անվտանգության, ժողովրդագրական, տնտեսական և սոցիալ-մշակութային, գիտական տեսանկյուններից:

Սակայն հայրենադարձությունը՝ սփյուռքի ներկայացուցիչների վերադարձը ելքի երկիր կամ էթնիկ հայրենիք, իր բոլոր տարատեսակներով (միայն տիտղոսակիր էթնոսի վերադարձ, քաղաքացիների վերադարձ, կամավոր, իրավիճակային կամ բռնի վերադարձ) ունի քաղաքականության, իրավական հիմքերի և ինտեգրման ծրագրերի անհրաժեշտություն: Դրանք հարկ է մշակել՝ հաշվի առնելով բազմազան պայմաններում գտնվող հայկական սփյուռքից հայրենադարձության հնարավոր բոլոր սցենարները: Հայրենադարձության մշակված քաղաքականությունը հնարավորություն կտա ունենալ համակողմանի վերլուծություն և պատկերացում՝ Հայաստանում հայրենադարձության խնդիրների, դրանց հաղթահարման ուղիների բացահայտման, հայրենադարձության քաղաքականության ուղենիշերի, օրենսդրական, իրավական կարգավորման սկզբունքների, ինտեգրման ծրագրերի և ինստիտուցիոնալ աջակցության մեխանիզմների մշակման վերաբերյալ:

Թավշյա հեղափոխությունը, ի թիվս այլ դիսկուրսների, ակտիվացրեց հայրենադարձության մասին քննարկումներն ու ակնկալիքները Հայաստանում և սփյուռքում: Նոր իշխանությունների հանրային ելույթները ցույց են տալիս, որ նրանք լիահույս են ներգաղթի հարցում՝ Հայաստանում տեղի ունեցող ոգևորիչ գործընթացների, փոփոխությունների խորապատկերին: Ավելին, նոր ձևավորված կառավարության առաջին ծրագրում, ինչպես նաև 2018-ի խորհրդարանական արտահերթ ընտրություններին «Իմ քայլը» դաշինքի ծրագրում հստակ էր հայրենադարձության խթանման և կազմակերպման հանձնառությունը: Սակայն հետագայում Կառավարության գործողությունները այս ուղղությամբ նախաձեռնողական մոտեցման չվերածվեցին՝ մնալով հայտարարությունների, կոչերի ու ցանկությունների մակարդակով:

Այսօր հայրենադարձության գործում պետության հանձնառությունը արտահայտվում է երկու փաստաթղթերում. 1) ՀՀ կառավարության ծրագրում «Սփյուռքի հետ կապերը» ենթաբաժնում սահմանված չորս ուղղություններից մեկը՝ հայրենադարձության խթանում և ՀՀ-ում սփյուռքահայերի ինտեգրման

աջակցություն, 2) Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի լիազորություններից մեկը՝ Հայաստան-սփյուռք գործակցության համար առաջարկություններ ներկայացնել Վարչապետին հայրենադարձության և Հայաստանում սփյուռքահայերի ինտեգրման ուղղությամբ: Իհարկե, էթնիկ հայերի ներգաղթը խթանող կարգավորումներից է նաև երկաթաղաքացիության կամ հեշտացված կարգով քաղաքացիության տրամադրումը: Սակայն ներկա բոլոր կարգավորումները սփյուռքի ներգրավման կրավորական/պասսիվ քաղաքականություն է:

ՀՀ կառավարությունը, մի կողմից, հայտարարում է հայրենադարձության կարևորության, մտադրությունների և հանձնառության մասին, մյուս կողմից դեռևս ակնհայտ չէ հոչակվող մոտեցման հենքը՝ քննարկումների, ծրագրերի, ռազմավարության, քաղաքականության փաստաթղթերի մշակման և այլ ձևերով: Այդ ուղղությամբ միակ պաշտոնական գործընթացը Ազգային Ժողովում «Հայրենադարձության մասին» օրենքի նախագծի մշակման աշխատանքներն են: Սակայն, հարկ է նշել, որ, չնայած օրենքի ընդունման, իրավական կարգավորումների կարևորությանը, այն ինքնին չի կարող հանդիսանալ հայրենադարձության շարժառիթ, խրախուսիչ, գայթակղիչ հանգամանք: Հայրենադարձության նշանակալի հոսքեր կարող են տեղի ունենալ միայն պետական քաղաքականության և մշակած ռազմավարության առկայության պարագայում:

Քաղաքական դիսկուրսում գերշեշտադրելով հեղափոխությունը և դրա հետևանքով առաջացած փոփոխությունները, ժողովրդավարական բարեփոխումների քաղաքական կամքը, ակնկալվող սոցիալ-տնտեսական բարելավումը, ժողովրդագրական աճի տեսլականը (2050 թվականին ունենալ 5 մլն. բնակչություն), Կառավարությունը լիահույս է զանգվածային հայրենադարձության հարցում՝ նշելով դրա իրագործման մոտալուտ ժամանակահատված: Չնայած այն հանգամանքին, որ նման հայտարարությունները կարող են լավատեսական սպասումներ առաջացնել Հայաստանում և սփյուռքում, սակայն լինելով անիրատեսական՝ ժամանակի ընթացքում կարող են վերածվել հիասթափության:

Հայրենադարձության կամ վերադարձի հարցում պետությունը կրում է իրավական և բարոյական պատասխանատվություն: Հետևաբար, նախ, պետությունն

ինքը պետք է պատրաստ լինի ընդունելու ներգաղթի հոսքեր՝ հաղթահարելով խոչընդոտները, ստեղծելով համապատասխան պայմաններ և միջավայր, ապա պետք է թիրախավորված աշխատանքներ իրականացնի սփյուռքի համապատասխան համայնքների հետ: Նման աշխատանքները հնարավոր չէ համակարգված իրականացնել առանց հատուկ քաղաքականության և ռազմավարության, որոնք կաահմանեն հայրենադարձության գործընթացի ուղենիշերը: Դրանք կարելի է խմբավորել հետևյալ ուղղություններում.

- Հայեցակազային մոտեցումների և հասկացությունների սահմանում
- Գաղափարական հենքի մշակում
- Կարիքների գնահատում Հայաստանում և սփյուռքում
- Սփյուռքի համայնքների դասակարգում՝ ըստ հայրենադարձության հավանականության գործոնների
- Թիրախավորված ծրագրեր տարբեր համայնքների, ՀՀ տարբեր մարզերի և ներգրավման ոլորտների համար
- Հայրենադարձների ինտեգրման ծրագրերի կազմում
- Տարբեր ոլորտներում ինտեգրման խոչընդոտների սահմանում և դրանց հաղթահարման ուղիների որոնում
- Արտոնությունների շրջանակների սահմանում
- Օրենսդրական, իրավական կարգավորումների մեխանիզմների հստակեցում
- Ֆինանսական միջոցների ներգրավման ուղիների մշակում
- ՀՀ միգրացիոն և ներգաղթի քաղաքականության հետ հարմարեցում

Առանց նման համալիր մոտեցման առանձին-առանձին իրագործված ծրագրերը կամ նախաձեռնությունները դատապարտված են ձախողման կամ անարդյունավետության:

Պետք է նկատի առնել այն իրողությունը, որ Հայաստանը դեռևս շարունակում է մնալ արտագաղթի գերակշռությամբ երկիր և սփյուռքի հայաշատ համայնքների ընդունող երկրների ճնշող մեծամասնության սոցիալ-տնտեսական պայմանների հետ անմրցունակ դիրքում: Հետևաբար, քիչ հնարավոր է թվում սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավման հիմքով ներգաղթի հոսքեր ապահովելը: Այստեղ առաջ է

գալիս ծրագրային-գաղափարական մոտեցման, սփյուռքի լայն ներգրավման միջավայրեր և պայմաններ ստեղծելու անհրաժեշտությունը: Ներգաղթի տեսանկյունից գրավիչ երկիր չլինելու հանգամանքը պարտադրում է ունենալ պետական նախաձեռնողական քաղաքականություն:

Միրիական հակամարտության հետևանքով 2011 թվականից սիրիահայ փախստականների ներգաղթը Հայաստան և նրանց ինտեգրման փորձը ցույց են տալիս, որ պետությունը պատրաստ չէր ընդունել, տեղավորել և ինտեգրել այդքան ներգաղթյալների (ըստ պաշտոնական տվյալների, Հայաստան է ներգաղթել մոտ 22.000 սիրիահայ): Եվ նման անպատրաստությունը ոչ միայն երկրի օբյեկտիվ սոցիալ-տնտեսական և այլ պատճառներով էր, այլև նման իրավիճակների համար ռազմավարության բացակայության:

Ժողովրդագրական իրավիճակի բարելավման և տնտեսական զարգացման նպատակով սփյուռքի ներգրավումը սակայն իրական հայրենադարձության վերածելու համար հարկ է ստեղծել մշակութային բազմազանության ներառական միջավայր: Չնայած էթնիկ ինքնության նույնականությանը, սփյուռքում առկա է մշակութային ինքնության բազմազանություն՝ կախված ընդունող երկրի առանձնահատկություններից, սփյուռքի ցրման ելակետից (Արևմտյան Հայաստան, Հայաստանի Հանրապետություն, Խորհրդային Միության նախկին երկրներ և այլն), սերնդափոխությունից, սփյուռքացման փորձառությունից և այլ գործոններից: Սփյուռքի տարբեր խմբերում բազմազան է նաև հայրենիքի ընկալումը: Վերջինս էական նշանակություն ունի հայրենադարձության գործում: Բնակության երկիրը հաճախ նույնացվում է հայրենիքի հետ: Ավանդական, հետցեղասպանական սփյուռքի ներկայացուցիչների համար հայրենիքը Արևմտյան Հայաստանն է, իրենց նախնիների ծագման լոկալ վայրերը: Առաջին տեղակայման գաղթօջախներից արտագաղթածների համար հաճախ հայրենիքը ելքի երկիրն է (օրինակ, արևմտյան երկրներ ներգաղթած լիբանանահայերի, սիրիահայերի համար կարող է հայրենիք համարվել Լիբանանը, Միրիան): Կամ՝ սփյուռքի սահմանումներում գտնվող համայնքները չեն վերագրում իրենց այդ բնորոշումը՝ համարելով իրենց բնակության երկրի տիտղոսակիր ազգ (օրինակ՝ Վրաստանի, Թուրքիայի հայերը): Իրապես,

այսօրվա Հայաստանը երկրից արտագաղթացների համար է միայն իրական հայրենիք:

Սակայն ազգային պետության՝ Հայաստանի Հանրապետության (ներառյալ Արցախը) գոյությունը հնարավորություն է տալիս միավորել հայրենիքի մասին բազմազան պատկերացումները՝ երևակայական կամ կորուսյալ հայրենիքից դեպի ռացիոնալ հայրենիք, որն ընտրում են ինքնության, քաղաքական, գաղափարական և այլ նկատառումներով: Անհրաժեշտ է ամրապնդել հոգևոր և/կամ ֆիզիկական կապն այս հայրենիքի հետ, աշխատելով երկու ուղղություններով՝ գաղափարական և ծրագրային:

Ստորև քննարկենք Հայաստանում հայրենադարձության վերջին դեպքը՝ սիրիահայերի Հայաստան ներգաղթը և նրանց ինտեգրման խնդիրները:

### **Սիրիահայերը Հայաստանում. ինտեգրման խնդիրներ:**

Հայրենադարձության անընդհատ արդիականացող խոսույթներում կարևոր է հատկապես սիրիահայերի դեպքը, որն առանձնանում է դեպի Հայաստան վերջին տարիների ներհոքսի խմբերի մեջ <sup>12</sup> իր մեծ քանակությամբ, փոփոխման միտումներով, Հայաստանում բնակության տևական ժամանակահատվածով:

Սիրիահայերի ներգաղթը Հայաստան չի ընկալվում և գնահատվում միանշանակորեն: Այն ներկայացվում է տարբեր դիտանկյուններով՝ գիտական հանրության, սիրիահայերի և ընդունող երկրի կողմից, ինչպես նաև, սփյուռքի և միջազգային հանրության կողմից: Հայաստանյան և սփյուռքյան դիսկուրսներում այն ավելի շատ դիտարկվում է որպես հայրենադարձություն՝ պայմանավորված Հայաստանի ներգաղթի պատմությամբ, սփյուռքի առկայությամբ և էթնիկ պատկանելության հիման վրա ներգաղթի քաղաքականությամբ, ինչպես նաև հայրենադարձության քաղաքականության մասին պարբերաբար այժմեականացվող քննարկումներով:

---

<sup>12</sup> Ըստ մի շարք հետազոտողների՝ հայրենադարձության առաջին շրջանն ընդգրկում է 1914-1920թթ., երբ Արևմտյան Հայաստանից և Կարս նահանգից փախստականների հսկայական զանգված ներգաղթեց, հաջորդ փուլերն էին՝ 1920-1932թթ., 1946-1949թթ. և 1962-1980թթ. հայրենադարձների կազմակերպված խմբերի ներգաղթը, 1989-1990թթ. Ադրբեջանից բռնագաղթածների հոսքը, 1990-2000թթ. Իրաքից, Սիրիայից, ինչպես նաև ոչ մեծ խմբեր ներգաղթեցին Լիբանանից, Իրանից, Ուկրաինայից:



Ինչպես նշվում է շատ հետազոտություններում, ինքնակալումների առումով ՀՀ-ում սիրիահայերի խումբը միջանկյալ վիճակում է. այդ անորոշությունը ուղղակիորեն ազդում է սիրիահայերի կողմից իրենց հետագա կյանքը պլանավորվելու ընթացքի վրա:

Հայաստան ներգաղթած սիրիահայերին կարելի է պայմանականորեն բաժանել երեք հիմնական խմբերի. Հայաստանում հաստատված, Սիրիա վերադարձած և երրորդ երկիր արտագաղթած: Հենց Հայաստանում հաստատված սիրիահայերի խումբը շատ հաճախ ընկալվում է որպես հայրենդարձվող խումբ: Սակայն սիրիահայերի՝ ՀՀ-ում հաստատվելու միտումը հիմնականում պայմանավորված է ոչ թե ՀՀ համապատասխան քաղաքականությամբ, այլ Սիրիայում անկայուն իրավիճակի շարունակականությամբ:

Կարգավիճակային ընկալման վերոնշյալ տարբերություններից բխեցին նաև այն ծրագրերը, ինտեգրմանն ուղղված քայլերը, որոնք իրականացվեցին սիրիահայերի նկատմամբ:

Այս համատեքստում մի շարք հետազոտողներ և գիտնականներ իրենց առջև խնդիր են դրել ուսումնասիրել սիրիահայերին առնչվող տարբեր խնդիրներ, որոնք ներառել են այդ խմբի ճանաչմանն ուղղված (սոցիալ-ժողովրդագրական, մասնագիտական ցուցիչներ), իրավական կարգավիճակի, փաստաթղթերի հետ կապված մի շարք խնդիրներ: Մյուս կարևոր ասպեկտը, որին անդրադարձել են հետազոտողները, սիրիահայերի տնտեսական ինտեգրումն է Հայաստանում: Սիրիահայերի ընտանեկան ավանդույթների և արժեքների յուրահատկությունները, ադապտացման խնդիրների, մասնագիտական և սոցիալական ներգրավվածության, ինքնակազմակերպման հարցերը ևս ուսումնասիրվել են տարբեր հետազոտողների կողմից <sup>13</sup> : Իրականացված հետազոտություններն իրենց մեջ պարունակում են

---

<sup>13</sup> Հակոբյան Ա. Սիրիահայերը հայաստանում. հայրենադարձներ, թե՞ փախստականներ (իրավական, մշակութային ու սոցիալական ադապտացման հիմնախնդիրներ), Բաց Հասարակություն Հիմնադրամներ\_Հայաստան, 2017:

Հակոբյան Գ. Հայաստանում բնակվող սիրիահայ ընտանիքների էթնոմշակութային առանձնահատկությունները/ Արդի հայ ընտանիքը փոխակերպվող հասարակությունում, Երևան 2017: «Հայրենադարձության փորձը ու ինտեգրումը Հայաստանում. խոչընդոտները և հնարավորությունները», Երևան 2015:

Կարապետյան Ռ. Սիրիահայերը Հայաստանում. ադապտացման և ինտեգրման խնդիրները, ուսումնասիրության նպատակները, մեթոդաբանությունը և հեռանկարները, Սիրիահայերը

քաղաքականության մշակման համար կարևոր տեղեկատվություն և երկրորդային տվյալներ: Նշվածի համատեքստում առանձնանում են մի շարք հետազոտություններ, որոնք ուղղված են եղել սիրիահայերի կարիքների գնահատմանն ու առաջարկների մշակմանը :

**ՀՀ-ում սիրիահայերի նկատմամբ իրականացված ծրագրեր:**

Սիրիական հակամարտության հետևանքով Հայաստան տեղափոխված սիրիահայերի նկատմամբ պետական քաղաքականությունը դեռևս 2012թ-ից դարձել է անհրաժեշտություն: Սակայն այն կրում է իրադարձային բնույթ՝ պետության առջև ծառայած խնդրի լուծման հետևանքով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տեղահանվածներն ազգությամբ հայեր են և կազմում են սփյուռքի մաս, սիրիահայերի հետ տարվող աշխատանքներն ի սկզբանե համակարգել է ՀՀ սփյուռքի նախարարությունը: 2012թ-ից Սփյուռքի նախարարությունում գործել է սիրիահայերի հիմնահարցերով զբաղվող աշխատանքային խումբ, արագ արձագանքման խումբ, թեժ գիծ: ՀՀ վարչապետի 2013 թվականի հունվարի 14-ի N9-Ս որոշմամբ՝ ստեղծվել և իր գործունեությունն է ծավալել Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովը: Գործել են նաև ոլորտային չորս աշխատանքային խմբեր, որոնք իրենց գործունեությունն են իրականացրել սիրիահայերի խնդիրների ուղղությամբ՝ բնակարանային, աշխատանքային, առողջական և կրթական:

ՀՀ-ում սիրիահայերի նկատմամբ մշակվել են մի շարք աջակցման ծրագրեր տարբեր մակարդակներում՝ պետական գերատեսչությունների, միջազգային կառույցների, հասարակական և բարեգործական կազմակերպությունների: Այդուհանդերձ, պետք է արձանագրել մի փաստ, որ ՀՀ-ը չունի ներգաղթյալների ինտեգրման ընդհանրական մոտեցում՝ որպես պետական քաղաքականության մաս: Իրականացվող ծրագրերը սկսած 2013թ-ից ներառել են մի շարք ուղղություններ և իրագործվել տարբեր կազմակերպությունների կողմից: Ծրագրերը ներառել են տարբեր ուղղություններ՝ բնակարանային ապահովում, ֆինանսական, սոցիալական, առողջապահական, հոգեբանական, իրավաբանական աջակցություն, կրթական,

---

Հայաստանում. ինտեգրման ուղիները, (պատ. խմբ.՝ Կարապետյան Ռ., Բարսեղյան Ս.) Երևան, Գիտություն 2015:

աշխատանքային ոլորտներում օժանդակություն, տարբեր ժամանցային միջոցառումների կազմակերպում և այլն (տե՛ս Հավելված): Պետք է նկատել, որ ծրագրերի հիմնական մասը որդեգրել են գրեթե նույն ուղղվածությունը՝ միտված առաջնային կարիքների բավարարմանը: Ծրագրերից որոշների աջակցման շահառուները ոչ միայն սիրիական հակամարտության հետևանքով Հայաստան տեղափոխված սիրիահայերն են, այլ առհասարակ փախստականները և Հայաստանում ապաստան հայցողները <sup>14</sup> : Ընդհանուր առմամբ, ծրագրերը կետրոնացած են սոցիալ-տնտեսական ինտեգրման վրա: Ի հավելումն, փորձագիտական հարցազրույցներից պարզ է դառնում, որ իրականացված ծրագրերի վերաբերյալ տարբեր շրջանակների փորձագետների գնահատականները տարբերվում են: Պետական օղակներից ներառված փորձագետների գնահատմամբ խնդրի նկատմամբ ցուցաբերվել է պետական-ինստիտուցիոնալ մոտեցում: Սիրիահայերի խնդիրներով զբաղվել են բոլոր պետական մարմինները, որոնք որոշակի առնչություն կարող էին ունենալ սիրիահայերի հասարակական ինտեգրման ոլորտներում: Որոշումները և օրենքները ընդունվել են սիրիահայերի հարցերով զբաղվող հանձնաժողովի քննարկումների և նախաձեռնությունների շնորհիվ: Իրականացված ծրագրերի վերաբերյալ սիրիահայերի գնահատականները տարբերվում են: Ըստ սիրիահայերի կարծիքի՝ բարձր են գնահատվել Սփյուռքի նախարարության աշխատանքային խմբի, Սիրիահայերի խնդիրները համակարգող խորհրդի աշխատանքները և պատրաստակամությունը: Շատ բարձր են գնահատել հատկապես միջազգային կառույցների կողմից իրականացվող ծրագրերը, մասնավորապես՝ Կարմիր Խաչի, Կարիտասի աշխատանքները:

Այնուամենայնիվ, չնայած առկա գնահատականներին, ծրագրերը հիմնականում միտված են եղել առաջնային կարիքների բավարարմանը և կրել են կարճաժամկետ բնույթ, որոնք միտված են եղել խնդրի այդրոպեական լուծմանը: Ծրագրերից շատ քչերն են, որ նպաստել են Հայաստանում սիրիահայերի մշտական հաստատմանը և նրանց արտագաղթի կանխմանը:

**Իրավիճակ և փոփոխություններ:** Հայաստան տեղափոխված սիրիահայերի վերաբերյալ թվային տվյալների համադրումը թույլ է տալիս արձանագրել, որ

<sup>14</sup>[http://olp.advocates.am/pluginfile.php/1397/mod\\_resource/content/](http://olp.advocates.am/pluginfile.php/1397/mod_resource/content/) Հայաստանում տեղահանված անձանց աջակցման ծառայությունների տեղեկատվական թերթիկ

բացակայում է հստակ վճակագրությունը և առկա թվային տվյալներն ունեն տարբերության լայն միջակայքեր: Տարբերվում են նաև գիտական, պաշտոնական և միջազգային տվյալները: Հստակ վիճակագրության բացակայություն է նկատվում ոչ միայն տվյալների հավաքագրման համընդհանուր գործընթացի, այլ նաև այդ խմբի անընդհատ փոփոխվող տվյալների շարժընթացի վերաբերյալ: Առհասարակ նրանց միգրացիոն հոսքի փաստագրման կամ տվյալների հավաքագրման որևէ մեխանիզմ չի գործել, բացի ՀՀ պետական սահմանը հատելու և վիզա ստանալու ընթացակարգից: Ըստ մեր իրականացրած հետազոտության արդյունքների՝ այս բնագավառում առաջացած խնդիրների դեպքում սիրիահայերը սեփական նախաձեռնությամբ դիմել են կա՛մ Սփյուռքի նախարարության, կա՛մ Միգրացիոն ծառայության օգնությանը, կամ էլ՝ ՀՀ ոստիանության անձնագրերի ու վիզաների վարչություն:

Ըստ պաշտոնական տեղեկատվության՝ 2011թ-ից, ընդհանուր առմամբ, Հայաստան է մուտք գործել 22.000 սիրիահայ: Միայն 2013թ. ՀՀ է մուտք գործել 6000-7000 սիրիահայ: 2014թ. Հայաստանում բնակվել էր գրեթե 11.000 սիրիահայ: Պաշտոնական տեղեկատվությամբ՝ 2018թ-ին Հայաստանում բնակություն է հաստատել 5000-8000 սիրիահայ: Համաձայն ՄԱԿ-ի փախստականների գործերով հանձնակատարի ներկայացուցչի հաղորդման՝ 2011թ-ից սկսած Հայաստան է ներգաղթել 15.000 սիրիահայ, որից 12.000-ը հաստատվել է հայրենիքում, իսկ մոտ 3.000-ը տեղաշարժի մեջ է:

Սիրիահայերի՝ որպես հայրենդարձների ինտեգրման փորձառությունը ուսումնասիրելիս չենք կարող շրջանցել կարգավիճակային տարբերությունները և դրանցով պայմանավորված մարտահրավերները: Վերջինս ուսումնասիրվել է մի շարք հետազոտողների կողմից:

Առկա օրենքների և հետազոտությունների վերլուծության հիման վրա, պարզ է դառնում, որ ՀՀ-ում սիրիահայերն ունեն տարբեր իրավական կարգավիճակներ՝ ՀՀ քաղաքացիներ (երկքաղաքացիներ), փախստականներ և ապաստան հայցողներ, ժամանակավոր կամ մշտական կացություն ունեցողներ (1, 5, 10 տարի ժամկետով): Ըստ պաշտոնական տեղեկատվության՝ 2012թ. ՀՀ քաղաքացիություն է ստացել 5026 սիրիահայ, 2013թ.՝ 4150 սիրիահայ, 2014թ.՝ 1531 սիրիահայ: 2012-2014թթ. ՀՀ

քաղաքացիություն է ստացել 10707 սիրիահայ: 2013-14թթ. 220 սիրահայ ձեռք է բերել ժամանակավոր (1տարի), 155-ը՝ մշտական (5 տարի), իսկ 390-ը՝ հատուկ կարգավիճակ (10 տարի)<sup>15</sup>: Փախստականների և ապաստան հայցողները կազմում են բավական փոքր թիվ՝ ՀՀ-ում «հաստատված» սիրահայերի մոտ 7%ը (700-800 հոգի): Այդ տվյալները վերաբերում են 2012-2013թթ.<sup>16</sup> : Միգրացիոն ծառայության տվյալներով՝ 2013թ. փախստական է ճանաչվել ու ապաստան ստացել Սիրիայից ժամանած 236 քաղաքացի, որից կացարանով ապահովվել է 136-ը, իսկ 36 սիրիահայերի կացարանի ապահովվածության հարցը լուծել են առանձին անհատներ<sup>17</sup>:

Նշված տվյալները փոփոխական են՝ պայմանավորված այն հանգամանքով, որ «փախստական» կարգավիճակ ձեռք բերած անձինք դիմում և ստանում են նաև ՀՀ քաղաքացիություն, որով և դադարեցվում է նրանց «փախստականի» կարգավիճակը: Սիրիահայերի՝ այս կարգավիճակը հայցելու պատճառներից է երաշխավորված ապաստան ունենալու խնդիրը, և հետևելով օրենքի անվանմանը՝ շատ սիրիահայեր հենց ապաստան-կացարան ունենալու համար են դիմում «փախստականի» կարգավիճակ ձեռք բերելու համար<sup>18</sup>: Ընդհանուր առմամբ, սիրիահայերի գերակշիռ մասը միտված է ձեռք բերել ՀՀ քաղաքացիություն, կամ արդեն նախքան ներգաղթելը ուներ երկքաղաքացիություն: Նման մոտեցումը խրախուսելի է նաև ՀՀ իշխանության կողմից, քանի որ դա չի ենթադրում պետության կողմից որևէ պարտավորություն: ՄԱԿ-ը իր ծրագրերում սիրիահայերին տալիս է ոչ թե «փախստականի» կարգավիճակ, այլ կիրառում է «հակամարտության արդյունքում տեղահանված սիրիացիներ» եզրույթ: Վերջինս ենթադրում է դե ֆակտո փախստականի կարգավիճակ: Այս համատեքստում էլ ՄԱԿ-ը Հայաստանում իրականացնում է մի շարք աջակցման, մարդասիրական ծրագրեր:

<sup>15</sup> Հակոբյան Ա. Սիրիահայերը հայաստանում. հայրենադարձներ, թե՞ փախստականներ (իրավական, մշակութային ու սոցիալական ադապտացման հիմնախնդիրներ), Բաց Հասարակություն Հիմնադրամներ\_Հայաստան, 2017:

<sup>16</sup> What is the impact of the Syrian crisis on migration governance of the Republic of Armenia? pp. 2-3 [http://www.migrationpolicycentre.eu/docs/policy\\_brief/PolicyBrief-Armenia-2013.pdf](http://www.migrationpolicycentre.eu/docs/policy_brief/PolicyBrief-Armenia-2013.pdf)

<sup>17</sup> <sup>16</sup> <http://www.aravot.am/2014/01/14/422390/>

<sup>18</sup> Հակոբյան Ա. Սիրիահայերը հայաստանում. հայրենադարձներ, թե՞ փախստականներ (իրավական, մշակութային ու սոցիալական ադապտացման հիմնախնդիրներ), Բաց Հասարակություն Հիմնադրամներ\_Հայաստան, 2017:

Այսպիսով, ակնհայտ է, որ չկա սիրիահայերի կարգավիճակի վերաբերյալ համապարփակ մոտեցում: Նրանք ունեն տարբեր իրավական կարգավիճակներ և դրանից բխող ինտեգրման խնդիրներ:

**Սիրիահայերի ինտեգրման խնդիրները հայրենադարձության համատեքստում:**

Հայաստանյան և սփյուռքյան դիսկուրսներում սիրիահայերի ներգաղթը հայրենիք առավելապես դիտարկվում է որպես հայրենադարձություն: Այս փաստը նաև հասատատվում է երկրորդային տվյալներով, ըստ որոնց հարցված սիրիահայերի մեծ մասը (շուրջ 40%)<sup>19</sup> Հայաստան ներգաղթի պատճառը նշում են հայրենիքի գաղափարը:

Դիտարկելով սիրիահայերի դեպքը հայրենադարձության և ինտեգրման միջազգային փորձի համատեքստում, դուրս բերենք այն խնդիրները, որոնք առջացել են ներգաղթյալների այդ խմբի մոտ մոտ տարբեր փուլերում:

*Նախապատրաստական* փուլում հայրենադարձը փորձում է տեղեկատվություն ստանալ տվյալ երկրի տարբեր ոլորտների մասին՝ մշակույթ, աշխատաշուկա, ընթացակարգեր, վարչարարություն և այլն: Այս փուլը սիրիահայերի պարագայում բացակայում է, քանի որ նրանք հարկադրված են եղել լքել իրենց բնակավայրը անկանխատեսելիորեն: Եվ բնականաբար, այս փուլում առաջացել են առանջնային խնդիրներ: Սա համարվում է կողմնորոշան փուլ, որը Հայաստանում պետք է լրացվեր համապատասխան քայլերի և քաղաքականության միջոցով: Ինչպես նշում են հարցված սիրիահայերը, իրենց չկողմնորոշվածությունը հիմնականում կապված էր փաստաթղթային հարցերի, բնակարանի ձեռքբերման և այլ խնդիրների հետ:

*«Մեզ համար Հայաստան մուտք գործելուց ի վեր դժվար եղավ հասկանալը, թե ինչ ուղղությամբ պետք է շարժվենք, ում միջոցով պետք է փաստաթուղթ հանենք, կամ ում դիմենք բնակարանի հարցող, եթե ծանոթ չունենք: Մենք սիրիահայում հստակ գիտեինք, համայնքի միջոցով կարող էինք շատ հարցերի պատասխաններ գտնել: Չնայած Սփյուռքի նախարարությունը աջակցում էր, բայց ամենքին մի ձև էր ստացվում, պետք է խնդիր ունենայինք, նոր դիմեինք»*  
*[Կին, 46տ.]:*

<sup>19</sup> Հակոբյան Գ., «Սիրիահայերի սոցիալ-մշակութային ադապտացիայի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում», աստենախոսություն, 2019թ.:

*Տիզիկական* տեղափոխության փուլում տեղի է ունենում սոցիալական կապերի միջավայրի խզում, որը սակայն հայրենադարձության իդեալական մոդելի ժամանակ տեղի է ունենում աստիճանաբար: Սիրիահայերի պարագայում կարող ենք առանձնացնել երկու դիտարկում: 1) Մի կողմից, սիրիահայերը անպատրաստ էին այդ գործընթացին, մյուս կողմից, համայնական սոցիալական միջավայրը որոշակի կտրվածքով վերստեղծվեց խմբային ներհոսքի ժամանակ: Այստեղ պետք է հաշվի առնել արատամղող (exclusive) քաղաքականության երկու հիմնական փորձերը: Առաջինը սիրիական դպրոցի բացումն էր, որը ԿԳՆ որոշմամբ բացվեց՝ նպատակ ունենալով հեշտացնելու երեխաների ինտեգրումը և լուծելու կրթական խնդիրները: Մյուսը սիրիահայերի համար ստեղծվող թաղամասն էր, որը չկառուցվեց մի քանի պատճառներով՝ տարածական հեռավորության, ֆինանսաական ներդրումների պահանջի և այլն: Բացի դրանից, ինչպես նշում են հարցված սիրիահայերից մեկը՝ «Թաղամասում բնակվելուն, ես անձամբ դեմ եմ եղել: Դրանով ավելի էր բարդանալու երեխաներիս, ընտանիքիս հարմարումը Հայաստանի մրջավայրին: Եթե հարևանական միջավայրում, կենցաղում որևէ հաղորդակցում չէր լինելու, ապա էլ ինչպես պետք է ինտեգրվեինք: Ինչ է, հայրենիքում ստեղծվեր սփյուռքի համայնք»:

*Անցումային* փուլը ժամանակավոր բնակության և աշխատանքային զբաղվածության խնդիրների լուծման փուլն է, որին ակտիվ մասնակցություն պետք է ունենան պետությունը և պետական ենթակառուցվածքները: Սա նաև կնպաստեր ապակենտրոն մոտեցմանը և տեղաբաշխման խնդրի լուծմանը, քանի որ, ինչպես ցույց են տալիս հետազոտության արդյունքները և այլ վիճակակազմական տվյալներ, սիրիահայերի ճնշող մեծամասնությունը բնակվում է Երևանում: Մարզերում և Արցախում կան շատ քիչ թվով ընտանիքներ: Տեղաբաշխման առումով, ըստ ուսումնասիրությունների տվյալների, սիրիահայերի մեծ մասը բնակվում է Երևանում, ինչի վրա ազդեցություն են ունեցել նրանք քաղաքաբնակ լինելը, քաղաքային պայմաններին ձգտումը, ինչպես նաև ուսումնական և այլ հաստատությունների մոտ լինելը:

Ամենակարևոր ու թերևս երկարատև փուլը *վերահարմարման փուլն* է: Այստեղ առաջ են գալիս մի շարք մարտարավերներ, արձագանքներ և հակազդում, առօրյա

կենցաղային շփումներ միջավայրի հետ, վարքային և արժեքային փոփոխություններ և այլն: Այս փուլում սիրիահայերի կողմից նշվող խնդիրները կարելի է բաժանել մի քանի հիմնական ոլորտների՝ սոցիալ-տնտեսական, սոցիալ-մշակութային և հասարակական-քաղաքական :

**Տնտեսական զբաղվածության խնդիրների** լուծումը ինտեգրման գործընթացի շարունականությունն ապահովող գործոն է: Այն էական նշանակություն ունեցավ սիրիահայերի արտագաղթի մտադրությունների վրա և կանխորոշեց շատերի հետ վերադարձը կամ միգրացիոն վարքն այլ երկիր: Բնեռային՝ բարձր և ցածր սոցիալական դիրք ունեցող խմբերը հակված են հեռանալ Հայաստանից՝ վերադառնալ Սիրիա կամ գնալ այլ երկիր: Տնտեսական ոլորտում կարևոր դեպքեր են ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող սիրիահայերը: Նրանք նշվել են մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ խնդիրներ: Առանձնացնենք դրանցից կարևորները.

- Օբյեկտիվ
  - ՀՀ տնտեսության փոքր շուկա
  - Անկայուն տնտեսական միջավայր
  - Վարչարարական, ինստիտուցիոնալ խնդիրներ
- Սուբյեկտիվ
  - միջավայրային անհամապատասխանություն
  - քիչ իրազեկվածություն տնտեսական ոլորտի, կանոնների և օրենքների մասին
  - սոցիալական կապերի բացակայություն
  - տնտեսվարման մշակույթների, աշխատանքի նկատմամբ վերաբերմունքի տարբերություններ

Սիրիահայերի վերաբերյալ տարբեր հետազոտական տվյալներ ցույց են տալիս, որ նրանց մեծ մասը Սիրայում ինքնազբաղված է եղել, սակայն Հայաստանում ունի ինքնաիրացման խնդիր: Հատկապես ընտանեկան բիզնեսները մեծ նշանակություն ունեն սիրիահայերի մշակույթում ու կենցաղում: Ինչպես նշում է սիրիահայերից մեկը՝ *«Մենք դեռ հնուց արհեստավոր համայնք ենք եղել : Հայաստանում ուզում ենք մի բան փոխել մեր մշակույթը բերել, բայց քանի որ կողմնորոշված չենք, չգիտենք, թե ինչը ոնց սկսենք, կամ որ արհեստը ինչին ծառայեցնենք»* : [Կին, 45 տ.]



Սոցիալ-տնտեսական կյանքում սիրիահայերի ներգրվածության և ինտեգրման խնդիրներն ունեն մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններ : Դրանց շարքում հարցվողների պատասխաններից կարող ենք առանձնացնել աշխատաշուկայի պահանջների տարբերությունը կամ անհամապատասխանությունն իրենց ունեցած մասնագիտական կամ կրթական տվյալներին, լեզվական խոչընդոտները (մասնավորապես՝ ռուսերենի չիմացությունը), աշխատանքի ցածր վարձատրությունը, տարբերվող աշխատաժամերի զբաղվածությունը և այլն :

**Սոցիալական հարաբերություններում** առաջին խնդիրներից սիրիահայերը առանձնացնում են սոցիալական ցանցի (կապերի) բացակայության և Հայաստանում դրա կարևորության մասին:

*«Հայաստանում կապ չունեցար, ծանոթ մարդ չունեցար, կամ եթե գնացած-եկած չեղար չես կարող հաջող գործ սկսել, երրորդ, չորրորդ անգամից նոր կստացվի: Բայց ամենքս չենք սպասում, երկրորդիկց հիասթափվում էինք մտածում ուր գնալ» : [տղամարդ, 49 տ.,]*

Վերջինիս պատճառով սիրիահայերի մոտ բացակայում է վստահությունը պետական կառույցների նկատմամբ: Հասարակության մակարդակով հարաբերությունների մեջ սիրիահայերն ունեն ն՛ դրական, ն՛ բացասական փորձառություն: Սիրիահայերի կողմից կարևոր խնդիր է դիտարկվել նաև, ըստ իրենց ընկալման՝ խտրական վերաբերումքը հիմնականում գումարային հարցերում:

**Մշակութային տարբերությունների** մասին խոսելիս սիրիահայերը հիմնականում նշում են լեզվական տարբերությունների, առօրյա կենցաղային շփումների կամ աշխատանքային մշակույթների տարբերությունների մասին: Լեզվամտածողության տարբերություններն առավել քան արդիական են ներգաղթյալ սիրիահայերի և հայաստանցիների՝ միմյանց չհասկանալու պատճառների շարքում: Առօրյա մշակութային պրակտիկաներում սիրիահայերը շեշտադրում են այնպիսի խնդիրներ, ինչպիսին է ազգային կամ եկեղեցական տոների նկատմամբ տարբերվող վերաբերմունքը և այլն: Հետաքրքրական է, որ սիրիահայերի մեծ մասը նշել է արժեհամակարգային տարբերությունները՝ որպես մշակութային փոխհասկացման խոչընդոտ, տալով հետևյալ գնահատականը :

*«Միրիայում մենք ավելի սովոր ենք եղել արևելքի բարքերին, մեզ ասում են արևելքի հայ, դրա պատճառով ունենք արժեքային տարբերություն հայաստանցուց, որտեղ ավելի եվրոպամետ են»:* [տղամարդ, 37 տ.,]

**Կրթական ոլորտում** սիրիահայերի մոտ եղել են մի շարք ֆինանսական և այլ խնդիրներ: Հարցված սիրիահայերը հիմնականում նշել են կրթական համակարգերի, բարձրագույն և միջնակարգ կրթական ծրագրերի տարբերությունները, արևմտահայերենի և արևելահայերենի որոշակի տարբերություններ, բուհական վարձավճարների խնդիրներ և այլն: ՀՀ հանրակրթական համակարգում սիրիահայ աշակերտների հիմնախնդիրները հիմնականում պայմանավորված են լեզվական խնդիրներով՝ որոշակի առարկաների հետ կապված, ինչպես նաև ՀՀ ու Միրիայի կրթական համակարգերի տարբերությամբ:

Որոշ առարկաներ դպրոցներում բոլորովին նոր են, ինչպես օրինակ ռուսերենը, որի համար իրականցված դասընթացները այդքան էլ չեն լուծել առկա խնդիրները: Հիմնականում կրթական ոլորտի խնդիրները հաղթահարվել են այն ընտանիքներում, որտեղ ծնողներից գոնե մեկը ուսում է ստացել Հայաստանում կամ կապեր է ունեցել հայաստանցիների հետ մինչև տեղափոխվելը:

ԲՈՒՀ-ական համակարգում ներառվելն առավել բարդ խնդիր է: Ինչպես նշում են հարցվողները՝ Միրիայում առավել մրցունակ մասնագիտությունները Հայաստանում արդիական չեն (բնապահպանական ճարտարագիտություն, սննդագիտական ճարտարագիտություն և այլն): Մյուս խնդիրն առաջանում է կապված կրթական մասնագիտական աստիճանաշնորհման հետ: Դա է պատճառը, որ այն սիրիահայերը, ովքեր մտադիր են բուհական կրթություն ստանալ Հայաստանում, ձգտում են արևմտյան կրթական համակարգ ունեցող ԲՈՒՀ:

Ինտեգրման կարևորագույն ուղիներից է մասնակցայնությունը **քաղաքական կյանքում**: Ըստ սիրիահայերի, իրենք հայաստանյան քաղաքական դաշտում դժվարանում են տեսնել իրենց դերը, քանի որ նախկինում նման փորձ չեն ունեցել: Սակայն այդունհանդերձ կա միտում, որ հասարակական-քաղաքական ներգրավման հայտ են ուզում ներկայացնել երիտասարդները, ովքեր սովորել կամ սովորում են ԲՈՒՀ-երում:

*«Նախկինում չէի էլ երագի քաղաքական գծով շարունակել, բայց հիմա Հայաստանում աստիճանաբար փոխվում են արժեքներս: Քաղաքականությունը սկսել է հետաքրքրել, եթե Միրիայում անգամ մտքովս չէր անցնում քաղաքական ոլորտում մասնագիտություն ձեռք բերել, հիմա այլ վերաբերմունք ունեմ: Բայց չեմ ուզում ներգրավվել որպես սփյուռքահայ, այլ որպես ՀՀ լիիրավ քաղաքացի»:* [տղամարդ, 29տ.]

Քաղաքական կյանքում մասնակցության խրախուսումն ըստ փորձագետների կարող է ծառայել ինտեգրման գործընթացին՝ լիարժեքորեն ներգրավվելու հայաստանյան իրականության մեջ:

Այսպիսով, Հայաստանում սիրիահայերի ինտեգրումը դեռևս շարունակվող գործընթաց է, և առկա են լուծում պահանջող խնդիրներ: Միրիահայերի դեպքը թույլ է տալիս հետևել ներգաղթի և ինտեգրման գործընթացին բոլոր փուլերում, ուստի հնարավորություն է ընձեռում մշակել համապարփակ քաղաքականության փաստաթուղթ, որը կներառի խնդիրների հաղթահարման արդյունավետ մեխանիզմներ նմանատիպ այլ դեպքերի համար ևս: Հատկապես Լիբանանի վերջին իրադարձությունները կարող են նախանշել նոր հայրենադարձության հոսքերի սկիզբ, որոնց քաղաքականության և գործնական քայլերի մակարդակով պետք է պատրաստ լինի Հայաստանը:

*Իրականացված հետազոտության, միջազգային փորձի և փաստաթղթերի վերլուծության արդյունքում մշակվել են քաղաքականության մի շարք առաջարկներ՝ ներգաղթի, հայրենադարձության և սիրիահայերի ինտեգրման քաղաքականության վերաբերյալ:*

### ***Միգրացիոն և հայրենադարձության քաղաքականության առաջարկներ***

- Ունենալով մեծ սփյուռք և ակնկալելով ծագումով հայերի ու ՀՀ քաղաքացիների ներգաղթի հիմնական ներհոսք, անհրաժեշտ է ունենալ առանձնացված քաղաքականություններ՝ հայրենադարձության քաղաքականություն և միգրացիոն քաղաքականություն:
- Անհրաժեշտ է հայրենադարձին տալ իրավական կարգավիճակ («Հայրենադարձության մասին» օրենքով կարգավորվող), որը կսահմանի

ենթակատեգորիաներ (հայրենադարձ, երկքաղաքացի, վերադարձող ՀՀ քաղաքացի և այլն):

- Չնայած քաղաքականությունների և կարգավիճակային տարբերակումներին, անհարաժեշտ է ունենալ նույնական և համանման ինտեգրման փաթեթներ :
- Առաջարկվում է ունենալ համընդհանուր միգրացիոն քաղաքականություն՝ ներառելով բոլոր տեսակի իրավական կարգավիճակ ունեցող ներգաղթյալներին:
- Միգրացիոն քաղաքականությունից առանձնացված հայրենադարձության քաղաքականության նպատակն է ընդլայնել ներգաղթը. ոչ միայն ընդունել, տալ կարգավիճակ և ինտեգրել կամավոր և իրադարձային սկզբունքով հայրենադարձված խմբերին, այլև նախաձեռնողական քաղաքականությամբ խթանել հայրենադարձության հոսքեր:
- Հայրենադարձության պրոակտիվ քաղաքականությունը ենթադրում է արտասահմանում գտնվող ՀՀ քաղաքացիների և սփյուռքի լայն շրջանակների ներառման քաղաքականություն, որը որոշակի արտոնությունների, պարտավորությունների փաթեթի միջոցով հիմք կհանդիսանա հետագա ֆիզիկական հայրենադարձության համար:
- Հիմնավոր է համարվում մշակել միջգերատեսչական, ինստիտուցիոնալ և համալիր մոտեցմամբ ներգաղթի քաղաքականություն:
- Կարևորվում է ներգաղթի գործընթացի մշտադիտարկման և արագ արձագանքման խմբի ձևավորման մեխանիզմի մշակումը, որը, ըստ կոնկրետ իրավիճակի, կարող է վերահսկել ներգաղթի ընթացքը, տեղաշարժերը, հավաքագրել տեղեկատվություն, իրականացնել կարիքների գնահատում և տալ ինտեգրմանն ուղղված առաջարկներ:
- Պետական մակարդակով ճշգրիտ տվյալների բազայի ստեղծումը՝ հետագայում կարիքների գնահատման և ինտեգրման նպատակով, հնարավորություն կտա հավաքագրել ներգաղթյալների սոցիալ- ժողովրդագրական տվյալները ՀՀ մուտք գործելու պահին՝ ըստ նախապես սահմանված ցուցիչների:
- Ներգաղթյալների խմբի հանդեպ իրականացվող քաղաքականությունը հարկ է մշակել՝ հիմնվելով հետազոտությունների վրա, որոնք կներառեն ներգաղթի

բոլոր փուլերը՝ ՀՀ մուտք գործելուց մինչև ինտեգրում:

- Իրականացվող ծրագրերի արդյունավետությունը բարձրացնելու, հասցեականությունն ապահովելու նպատակով և ինտեգրմանն ուղղված ծրագրերի ու հետազոտությունների անհարկի կրկնություններից խուսափելու համար (ոչ միայն ոլորտային/թեմատիկ, այլ նաև փուլային, օրինակ, առաջնային ինտեգրման խնդիրների լուծման ծրագիրը կրկնել ներգաղթի 4-րդ տարում) անհրաժեշտ է ապահովել համագործակցություն պետական, հասարակական և միջազգային երեք սեկտորիների միջև:
- Կարևոր է քաղաքականության փաստաթղթում ներառել ծրագրերի վերահսկողությանը, հաշվետվողականությանն ու թափանցիկությանը վերաբերող դրույթներ (հատկապես սփյուռքի միջհամայնքային համագործակցության, փոխօգնության, վստահության և արտակարգ իրավիճակներում մոբիլիզացման տեսանկյունից):
- Միգրացիոն քաղաքականության մեջ անհրաժեշտ է հստակ ձևակերպել սփյուռքի գործոնը, որը կսահմանի արտագաղթի և արտագաղթած անձանց ինտեգրման, ներգաղթի և հայրենադարձության, արտակարգ իրավիճակներում արագ արձագանքման և մոբիլիզացիայի տարրեր :
- Վստահության բարձրացման նպատակով՝ քաղաքականության մշակման և ծրագրերի իրականացման փուլում նպաստավոր է ներգրավել ներգաղթյալների խմբերի ներկայացուցիչների:
- Նպատակահարմար կլինի որդեգրել տարբերակված մոտեցում՝ ՀՀ քաղաքացիություն ստացած ներգաղթյալների նկատմամբ, ովքեր «Հայաստանում հաստատվելու» ինտեգրման փուլում են:

### ***Միրահայերի ինտեգրմանն ուղղված առաջարկներ***

- Մշակել սիրահայերի սոցիալ-մշակութային ներգրավվածությանը նպաստող քաղաքականություն՝ միջավայրային առանձնահատկությունների յուրացման, սոցիալական առաջընթացի և ինքնաիրացման նպատակով:

- Միրիահայ և հայաստանցի տարբեր խմբերի միջև ապահովել մշակութային երկխոսություն, փորձի փոխանակում՝ սկսած մասնագիտական հմտություններից մինչև առօրյա կենցաղային ավանդույթները:
- Տարբեր խմբերի համար (սեռատարիքային և այլն) մշակել հատուկ ծրագրեր՝ ծանոթությունների հարթակ ստեղծելու, դաշտին ծանոթացնելու, սոցիալական ցանցեր ստեղծելու համար:
- Հաշվի առնելով սիրիահայերի ինքնակազմակերպական և համայնքային կյանքի փորձառությունը՝ հասարակական կյանքում նրանց ներառումը իրականացնել ՀԿ-ներում և քաղաքացիական հասարակության մեջ ներգրավման միջոցով:
- Միրիահայ և հայաստանցի տարբեր խմբերի միջև ապահովել մշակութային երկխոսություն, փորձի փոխանակում՝ սկսած մասնագիտական հմտություններից մինչև առօրյա կենցաղային ավանդույթները:
- Հայաստանում առկա տեղեկատվական դաշտում ապահովել սիրիահայերի ներկայացվածությունը՝ ապահովելով հասարակության հետ չմիջնորդավորված հաղորդակցման հնարավորությունը:
- ԶԼՄ-ների, մշակութային և կրթական միջավայրերի միջոցով նպաստել հանդուրժողականության բարձրացմանը:
- Կրթական համակարգերի տարբերությունները հաղթահարելու և Հայաստանի չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով կազմակերպել դասընթացներ:
- Դպրոցական կրթության համակարգում կատարել մի շարք ծրագրերի ներդրում, որոնք թույլ կտան լուծել ներգաղթյալների ունեցած խնդիրները, ինչպես օրինակ՝ նվազեցնել լեզվամշակութային խնդիրները լրացուցիչ պարապմունքների միջոցով, կազմակերպել հատուկ խորհրդատվություններ ծնողների հետ, իրազեկել կրթական համակարգում եղած խնդիրների վերաբերյալ:

Հավելված<sup>20</sup>

Կառույց, կազմակերպություն	Աջակցության ուղղություն
ՀՀ սփյուռքի նախարարություն	Սիրիահայերի հրատապ օգնություն, ինտեգրման խնդիրների լուծում:
ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, Միգրացիոն պետական ծառայություն	Հումանիտար (փաստաթղթային և այլ առաջնային հարցեր) Սոցիալ-մշակութային ինտեգրում (կարիքների գնահատում, ուղղորդում, տարբեր դասընթացերի կազմակերպում, ժամանակավոր ապաստանի տրամադրում)
ՀՀ-ում ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի ներկայացուցչություն UNHCR	Պաշտպանություն, ապաստան հայցողների առաջնային կարիքների և հիմնական ծառայությունների ապահովում Երկարատև լուծումների խթանում, ինտեգրման և ինքնաապահովման ամրապնդում Ապաքաղաքացիության կանխարգելում և նվազեցում
Ամերիկյան Իրավաբանների ընկերակցություն ABA ROLI	Իրավական և սոցիալ-տնտեսական ինտեգրում (իրավաբանական խորհրդակցություն, իրավագիտակցության մակարդակի բարձրացում և այլն) 2016-18թթ.
«Սիրիահայերի միություն» ՀԿ	Սիրիահայերի տնտեսական ինտեգրում, ՀՀ-ում հայրենադարձության խթանում (սիրիահայերի ուղղորդում հայաստանյան բիզնես միջավայրում, այլ նախաձեռնություններ՝ ցուցահանդես վաճառքներ, ազգային արհեստների ցուցադրում և հանրայնացում և այլն), 2018թ.
Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն	Սոցիալ-տնտեսական, մշակութային ինտեգրում, հումանիտար օգնություն
«Հալեպ հայրենակցական բարեսիրական ընկերություն» ՀԿ	Սոցիալ-տնտեսական ինտեգրում (արտագաղթի կանխում, սիրիահայերի՝ Հայաստանում հաստատմանն աջակցություն), հունամտիտար օգնություն, սոցիալ-հոգեբանական աջակցություն
«Վերադարձ Հայաստան» հիմնադրամ	Սոցիալ-տնտեսական ինտեգրում՝ կողմնորոշման հանդիպումներ տարբեր բնագավառներում, (մասնավորապես՝ աշխատանքային զբաղվածության աջակցություն) Կարիքների գնահատում և օգնություն Քաղաքացիության, կացության աջակցություն Բիզնես տեղեկատվություն
Վորլդ Վիժն միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ	Սոցիալ-տնտեսական ինտեգրում (աշխատանքի տեղավորում, փոքր բիզնեսի խթանում, աշխատանք երիտասարդների հետ), 2017-18թթ.
ՀՀ փաստաբանների պալատի հանրային	Անվճար իրավաբանական խորհրդատվություն

<sup>20</sup> [http://olp.advocates.am/pluginfile.php/1397/mod\\_resource/content/](http://olp.advocates.am/pluginfile.php/1397/mod_resource/content/) Հայաստանում տեղահանված անձանց աջակցման ծառայությունների տեղեկատվական թերթիկ (աղյուսակում տեղ գտած ծրագրերը լիարժեք չեն, սակայն ծառայում են որպես տեղեկատվություն իրականացված ծրագրերի ուղղությունների մասին)

պաշտպանի գրասենյակ	
ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ	Իրավական աջակցություն
«ՀՀ փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամ	Սոցիալ-տնտեսական ինտեգրում (ձեռնարկատիրական գործունեության խթանում)
«Առաքելություն Հայաստան» ՀԿ	Հումանիտար, իրավական և սոցիալ-տնտեսական ինտեգրում (սոցիալական, իրավական և բժշկական աջակցություն, կրթական/մասնագիտական աջակցություն, հոգեբանական աջակցություն)
Կազա շվեյցարական մարդասիրական հիմնադրամ	Սոցիալ-տնտեսական ինտեգրում, մշակութային ինտեգրում 2018թ.
Հայկական Կարիտաս բարեգործական ընկերություն	Իրավական, սոցիալ-տնտեսական ինտեգրում, մարդու իրավունքների պաշտպանություն, 2017-2019թթ.
Հայկական կարմիր խաչ ընկերություն	Սոցիալ-տնտեսական ինտեգրում, հումանիտար օգնություն
Հայ օգնության ֆոնդի Հայաստանյան մասնաճյուղ	Սոցիալ-տնտեսական, մշակութային ինտեգրում, հումանիտար օգնություն
Հայ Բարեգործական Ընդհանուր Միություն	Իրավական, սոցիալ-տնտեսական ինտեգրում (ուսանողների, վարձավճարների օժանդակություն, գյուղատնտեսական աջակցություն) մշակութային ինտեգրում, հումանիտար օգնություն, 2013թ.
Ջինիշյան հիշատակի հիմնադրամ	Սոցիալ-տնտեսական ինտեգրում (մասնավորապես՝ ձեռնարկատիրական գործունեության խթանում)
ՍՕՍ մանկական գյուղեր	Հումանիտար աջակցություն
Կանանց աջակցան կենտրոն	Իրավական, սոցիալ-տնտեսական ինտեգրում, հումանիտար օժանդակություն, 2018թ.
Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն (GIZ)	Միրիացի փախստականների տնտեսական ինտեգրումը Հայաստանում, սիրիահայ գործարարներին և աշխատանք փնտրողներին աջակցություն, 2015- 2018թ